

ԺԱՄԱՊԱՀԻ
ՀՈՒԽԱՍՏԵՏՐԸ

355.5
Զ-21

ԳԵՂԱԲՑ

1988

8098462

1 MAR 2010

355.5
D-21

Վ. ԺԱՄԱՊԱՐԻ
ՀՈՒՅԱՏԵՏՐԸ

ԳԵՏԱՐԱՏ — 1938 — ՑԵՐԵԿԱՆ

25 APR 2013

92.191

Փամապահի հուշաները: Գրքույկի մեջ
հերոս-ժամապահների կատարած մարտա-
կան խնդիրների որբնակներով ցույց և տըր-
գած, թե ինչպես պետք և պահե իրեն
կարմիր ռանակայինը պահակային ծառայու-
թյունը կատարելիս: Գրքույկը պատմում է
նաև թշնամական շափոնների մեքենայու-
թյունների մասին, այն մասին, թե ի՞նչպես
և ինչո՞ւմ պետք է այտարերել զղոնու-
թյուն՝ հաջողությամբ պայքարելու համար
ժողովրդի նորամաններու թշնամու դեմ: Գրք-
ույկը բացարում է ժամապահի պարտա-
կանությունները, նրա իրավունքներն ու
այն պահանջները, վոր առաջարում և
նրան պահակային ծառայության կանոնա-
դրությունը (ՊԵ-36):



1584

38



«ՊԱՌՆԻ ՊԱՏԵՐԱԶՄ»

Ցասումով, զայրույթով, անսահման ա-
տելությամբ և լցվում կարմիր Բա-
նակի յուրաքանչյուր մարտիկի սիրու,
յերբ մտածում ենա Փաշիստական ազենտ-
ների, ճակոն-գերմանական արոցկիստ-բու-
խարինյան լրտեսների, գամարնիկների,
տուխաչևակիների, յակիրների, ուրոբեկչ-
ների և ժողովրդի այլ ամենավոլսերիմ թըշ-
նամիների գարշելի խմբակի նողկալի վոճ-
րագործությունների մասին:

Հայրենիքի անարգ դավաճաններն աշխա-
տում եյին արագացնել պատերազմը մեր
յերկրի դեմ: Նրանք պատրաստում եյին

Կարմիր Բանակի պարտությունն այդ պատերազմում, յերազում եյին հեղեղել արյան ծովով մեր հրաշալի հայրենիքը և վերականդնել կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը: Նրանց գործակիցները, արոցկիստական զգիկելի ճիվաղները կազմակերպում և յերկաթուղային խորտակումներ, թունավորում եյին գաղերով, այրում և խեղում եյին բանվորներին, կոմյերիտականներին, ստախանովականներին, սպանում և հաշմում եյին յերեխաններին և կարմիր բանակայիններին: Զկա այնպես մի վոճիր, վորը չկատարեն այդ հրեշներն իրենց Փաշիստ տերերի հրամանով:

Վերջին ժամանակներս Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի որդաների կողմից, աշխատավորների ակտիվ աջակ-ցությամբ և ողնությամբ մերկացված և լիկիդացիայի յեն յենթարկված վոչ սահկավ լրտեսներէ շայկաներ: Մի շարք գառական գործեր, մանավանդ Տուխաչևսկաւ ռազմա-լրտեսական բանդայի դատը, ակուազմա-լրտեսական բանդայի դատը, ակուազմիր հերպով հաստատեց, վոր մեր հայ-

թենիքի թշնամիները մի ըոպե իսկ չեն ընդհատում իրենց կոփիլը մեր դեմ, շարունակութեղայնում են այդ կոփիլը և ամենազարշելի ու նենդ միջոցներով փորձում են թուլացնել մեր հզորությունը:

Միշտ ել, ամեն ժամանակ կապիտալիստական յերկրները ուղարկել են իրար մոտ լրտեսներ, վորպեսզի իմանան ուղղմական և պետական գաղտնիքները, վարեն վնասարար աշխատանքներ և կատարեն դիմերսիաներ, այսինքն՝ պայթեցումներ, հրկիդումներ, սպանություններ, թունավորումներ: «Գաղտնի պատերազմը», այսինքն լրտեսությունը, դիմերսիաները, վնասարարությունը և գալաճանությունը մի ըոպե իսկ չեն դադարել վոչ խաղաղ և վոչ ել պատերազմի ժամանակ:

Պարզ ե, վոր մեր յերկրի դեմ, բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության դեմ կապիտալիստները և նրանց ագենտները վարում են առանձնապես կատաղի, քայլայիչ աշխատանք: Համ, Կոմկուսի (բ) կենտկոմի փետրվար-մարտի պլենումում ընկեր Ստալինն առել է,

«Հարց ե ծագում, թե ինչո՞ւ բուրժուական պետությունները պետք ե ավելի մեղմ ու ավելի բարի դիացիաբար վարվեն Խորհրդային սոցիալիստական պետությանը, քան իրար նույնատիպ բուրժուական պետություններին։ Ինչո՞ւ պետք ե նրանք Խորհրդային Միության թիկունքներն ուղարկեն ավելի քիչ լրտեսներ, վնասարարներ, դիմերսանտներ ու մարդասովաններ, քան ուղարկում են իրենց ազգակից բուրժուական պետությունների թիկունքները։ Վորտեղից ե՞ք դուք այդ վերցրել։ Մարքսիզմի տեսակետից ավելի ճիշտ չե՞նի յենթադրել, վոր բուրժուական պետությունները պետք ե ուղարկեն Խորհրդային Միության թիկունքներն կրկնակի ու յեռակի անդամ ավելի վնասարարներ, լրտեսներ, դիմերսանտներ ու մարդասովաններ, քան վորեն բուրժուական պետության թիկունքները։

Պարզ չե՞նի արդյոք, վոր քանի դոյցություն ունի կապիտալիստական շրջապատռումը, մեղանում գոյություն կունենան վնասարարներ, լրտեսներ, դիմերսանտներ ու մարդասովաններ, քան վորեն գորոնց մեր թիկունքն են ու-

ղարկում ոտար պետությունների գործակալները»։

Բոլոր կապիտալիստական յերկրներից նոր համաշխարհային պատերազմի հրձիգներ և Խորհրդային Միության դեմ պայքարելու գործում նախամարտիկ են հանդիսանում Փաշիստական Գերմանիան, Խոտալիան և Ճապոնիան։ Գերմանական Փաշիստների և ճապոնական զինվորայնության պարագալուները շատ անգամ են բացարձակապես հայտարարել, վոր նրանք իրենց համար նպատակ են զնում պատերազմը Խորհրդային Միության դեմ։ Գերմանական Փաշիստների պարագալուն Հիտլերն ուղղակի ասել ե իր մտադրության մասին, — իլել Խորհրդային Աւկրաինան և Համբակակել մեր յերկիրը ընդհուպ մինչեւ Ուրալը։ Իր հերթին ճապոնական զինվորայնության պարագալուները լրացրեն բում, ժուռանալներում, դրքերում շատ անգամ են զրել իրենց պլանների մասին, արեվելքից՝ Հեռավոր Արևելքի և Սիբիրի վրայով նվաճել մեր յերկիրը մինչեւ Ուրալը։ Գերմանիան և Ճապոնիան 1936 թվի վերջին կնքել են պատերազմական դաշնագիր՝ միա-

սին հարձակվելու. Համար ԽՍՀՄ-ի վրա՝
«կոմունիզմի դեմ պայքարելու» պատրվակի
տակ: Ֆաշիստական Գերմանիան, Խոտիան և
Ճապոնիան զբարարությամբ, պըռվոկացիա-
ներով, ամենաստոր և գարշելի մեթոդներով
փորձում են պատերազմի կոչել մեզ: Վոչ
մի որ, վոչ մի ժամ նրանք չեն դադարեց-
նում իրենց կատաղի սպառազինումները:
Արդեն այժմ գերմանական բանակն ամենա-
բազմամարդն ե կապիտալիստական յերկըր-
ների բոլոր բանակներից (մոտ մի միլիոն
զինվոր):

Մեր յերկիրը՝ խաղաղության պատվարն
է: Խորհրդային Միությանը խորթ են վորեն
զավթողական ձգտումներ: Մեր յերկիրը
վոչ վոքի վրա չի պատրաստվում հարձակ-
վելու: Խորհրդային Միությունը ցույց
տալիս բոլոր յերկրներին բոլոր ժողո-
վուրդների և պետությունների մեջ խաղա-
ղության համար մղվող պայքարի անշեղ ու
հետեւղղական որինակ: Մեզ շրջապատող
համարյա բոլոր հարեան յերկրների
մետ մեր կառավարությունը կնքել և

պայմանագրեր չհարձակվելու մասին: Ֆրան-
սիայի, Չեխո-Մովակիայի և Մոնույական
Ժողովրդական Հանրապետության, հետ մենք
կնքել ենք փոխազարձ ողնության դաշնա-
գրեր: Ազգերի լիգայում և միջազգային զա-
նազան կոնֆերանսներում մեր խորհրդային
ներկայացուցիչներն ամեն անդամ առաջինն
են հանդես գալիս վորագես խաղաղության
պաշտպաններ: Հենց Խորհրդային Միու-
թյունն երայն առաջավոր մարտիկը, վորը
դեմ յերավ Փաշիստական Խոտիայի ավա-
զակային Հարձակմանը անպաշտպան Հա-
րեցստանի վրա: Խորհրդային Միությունն
առաջինն եր, վոր ամենայն վճռականու-
թյամբ պաշտպան կանգնեց խաղանական հե-
ռու ժողովրդին ընդդեմ գերման-իտալական
Փաշիստ ինտերվենտների լոկիրչ Հարձակ-
ման:

Մեր խաղաղ քաղաքականությունը հան-
դիպում ե պատերազմի հրձիգների ճապոն-
գերմանական կատաղի դիմադրության: Խնչ-
քան համառօրեն և պայքարում Խորհրդային
Միությունը խաղաղության համար, հա-
մախմբելով իր չուրջը խաղաղության կողմ-

նակիցներին բոլոր յերկրներում, այնքան
ամեւի համառորեն են պատրաստում և բոր-
բոքում պատերազմը Փաշխատական յերկրո-
ներու: Յեվ դրա համար ել ընկեր Ստալինը
նախադպուշադրել ե մեղ.

«Պատերազմը կարող ե բռնկիցել անսպասե-
լիորեն: Ներկայումս պատերազմները չեն
հայտարարվում: Նրանք ուղղակի ոկտում
են: Բայց, մյուս կողմից, յես կարծում եմ,
վոր խաղաղության բարեկամների դիրքերն
ամրանում են: Խաղաղության բարեկամնե-
ռո կարող են աշխատել բացարձակ, նրանք
հենվում են հասարակական կարծիքի ուժի
վրա, նրանց տրամադրության տակ կան այն-
պիսի գործիքներ, ինչպես, որինակ, Աղդերի
լիդան: Դրա մեջն ե խաղաղության բարե-
կամների պլյուսը: Նրանց ուժը նրանումն
ե վոր նրանց գործունելությունը պատե-
րազմի դեմ հենվում ե ժողովրդական լայն
մասսաների կամքի վրա: Ամբողջ աշխար-
հում չկա մի ժողովուրդ, վորը պատերազմ
ունիանա: Ինչ վերաբերում ե խաղաղության
թշնամիներին, նրանք ստիպված են գործել
գաղտադպողի: Դրա մեջն ե խաղաղության

թշնամիների մինուսը: Սակայն հավանական
է, վոր հենց այդ իսկ պատճառով՝ նրանք
կարող են նետվել պատերազմական աշխան-
այուբայի մեջ, վորպես հուսահատական ակ-
տի մեջ»: (Ընկեր Ստալինի զբույցից պկ. Բոյ
Հոռվարդի հետ):

Զի հայտարարվել, այլ «ուղղակի սկսվել
ե» ձապոնիայի պատերազմը Զինաստանի
դեմ: Առանց հայտարարելու «ուղղակի սկսո-
վել են» խոալացիների հարձակումները զա-
րթշատանի գեմ և խոալոգերմանսկան Փա-
շխտների ինտերվենցիան իսպանիայում:

Ֆաշլումը լրանում ե որեցոր: Ամեն մի-
շոցներով նա փորձում ե ճեղքել խաղաղու-
թյան պայքարի ճակատը և նետել մարդկու-
թյունը համաշխարհային նոր պատերազմի
մեջ: Յերբ ասեք, իսպանիայում տեղի ու-
նեցող պատերազմը կարող ե վերածվել պա-
տերազմի Գերմանիայի, Խոալիայի, Լեհաս-
տանի կողմից ընդդեմ Անգլիայի, Ֆրանսիա-
յի, Զեխոսլովակիայի: Բայց առաջին հեր-
թին Փաշխատների կողմից սարքվող պատե-
րազմի վիճակով սայցը ուղղված ե մեր հայ-
քնամիքի դեմ, Առօհքային Միության դեմ:

Վերջին ժամանակները ճապոնական զին-
վորայնությունն ուժեղացրել ե իր պրովո-
կացիոն դուծունեցությունը ԱՄՀՄ-ի դեմ:
Նորից մեր փառապանծ օահմանապահները
չեռավոր Արեւելքում ստիպված են հետ մղել
յելուզակների հանդուգն հարձակումները:
1937 թվի հունիսի 30-ին ճապոն-մանջուրնե-
րը խորակեցին մեր սահմանապահ կատե-
րը, սպանեցին յերկու մարտիկ և վիրավորե-
ցին յերեքին: Հուլիսի 5-ին մի որվա մեջ
յերկու անգամ ճապոն-մանջուրական ջոկա-
տը խուժել ե մեր հողը և զարձյալ սպանվել
և վիրավորվել են մեր մարտիկներից մի
քանի հոգի: Պրովոկացիաները չեն դադա-
րում...

Յեվ նույնպես մի որ իսկ չի դադարում
լրտեսական գործունեցությունը: Գերմանա-
կան և ճապոնական հետախուզությունները
լրտեսական, վնասաբարական և դիվերսան-
տական բանդաների գլխավոր կազմակեր-
պողներն են ԽՄՀՄ-ում:

Ո՞ւմ վրա յե հենվում ճապոն-գերմանական
հետախուզությունը մեր յերկում: Ո՞ւմնից
ե նա ընտրում իր լրտեսական կադրերը:

Զախշախիչած և լուծարքի յենթարկված շա-
հագործող դասակարգերի բեկորներից:
Ֆաշիստական հետախուզության գլխավոր
նեցուկ, ուղղակի գյուտ են հանդիսանում
նրա համար տրոցկիստական-բուխարինյան
ճիշգները: Այդ սրբկաները, կորցրած
մարդկային կերպարանքը, կուրացած գեղի
բանվորներն ու կոլտնտեսականներն ունեցած
ատելությամբ, դաշտանել են հայրենիքին,
ուրախությամբ ծախվել են ոտարեկլրյա
գաղտնի վոստիկանություններին (պահոր-
դական բաժանմունքներին) և դարձել են
քրեական վոճարագործների, շպիոնների, մար-
դասպանների և դիվերսանտների վարձկան
բանդա:

Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսա-
րիատի որգանների կողմից վերջին ժամանակ
հայտնաբերված բոլոր ամենանողկալի վոճ-
րագործությունները կատարված են տրոց-
կիստ-բուխարինյան սրիկաների կեղառու
ձեռքերով: Այդ սրանք, արոցկիստներն ու
բուխարինյանները, սպանեցին մեր անմռոա-
նալի Սերգեյ Միրոնովիչ Կիրովին, արա-
գացրին թանկագին Սերգո Որջոնիկիձեյի մա-

Հը, մոհավորք սարքեցին խորհրդացին կառավարության գլխի՝ Վաշեսլավ Միխայլովիչ Մոլոտովի կյանքի դեմ, պատրաստում ելին մեր սիրելի մեծ առաջնորդի՝ ընկեր Ստալինի և նրա ամենամոտիկ զինակիցների՝ ընկերներ Վորոչելովի, կադանովիչի; Յեժովի և ուրիշների սպանությունը։ Տրոցկիստներն ու բուխարինյանները վաճառքի ելին հանում մեր հայրենիքը, գաղտնի համաձայնության ելին գալիս գերմանական և ճապոնական Փաշչստների հետ, խոստացել ելին տալ Ռւկաբինան, Պրիմորյան և Մերձամուրյան յերկրամասները ի հատուցումն գերմանական և ճապոնական սվինների։

Տրոցկիստներն ու բուխարինյանները ճապոնական և գերմանական հետախուզությունների առաջարկությամբ կազմակերպում ելին պայմենացների, գնացքների խորտակումներ, հանքահորերի փլածքներ, ջարդուում ելին մեքենաները, փորձում ելին շարքեց հանել մեր կարեռը պաշտպանողական ձեռնարկությունները, սպանում ելին բանվորներին, յերեխաններին, կարմիր բանակայիններին։ Կեմերովի հանքահորերում

և Գորլովի ազուտ-առուկային գործարանում տրոցկիստների կատարած հրդեհի և պայմենացների ժամանակ սպանվել են տասնյակ լավագույն ստախանովական - բանվորներ, կոմյերիտականներ։ Շումիխա կայարանի մոտ տեղի ունեցած յերկաթուղային գնացքի խորտակման ժամանակ սպանվել և վիրավորվել են 58 կարմիր բանակայիններ։ Կիյան կայարանի մոտ տեղի ունեցած ճեղքացքի խորտակման ժամանակ սպանվել են 49 թվի հունվարի 27-ի գիշերը սպանվել են 49 և վիրավորվել 95 աշխատավոր հարվածայիններ, վորոնք վերադառնում ելին հանդստի տներից։ Ահա այս ե տրոցկիստական-բուխարինյան լրտեսական բանդայի արյունալի վոճրագործությունների ցուցակը, վորը շատ հեռու յել լրիվ լինելուց։

Լայնորեն ոգտագործելով տրոցկիստական-բուխարինյան տականքներին, գերմանական և ճապոնական հետախուզությունները միաժամանակ հավաքագրում ելին իրենց ազենոններին բնակչության տարբեր խմբերից, գործ դնելով դրա համար ամենանենդպրիումներ՝ կաշառք, շանտաժ, սպառնա-

իքներ, խաբեյություն, պղովկացիա:
նրանք տեղեկանում եյին առանձին անհատ-
ների թույլ ու արատավոր կողմերը, որի-
նակ, դյուրահավատություն, շաղակրատու-
թյուն, հակումն զեալի հարթեցողություն
կամ անրարոյական կյանքը, փողասիրու-
թյուն և ոգաագործելով այդ թույլ կողմե-
ռ, հետզհետե առնում եյին մարդուն իրենց
ցանցի մեջ: Յերբեմն նրանք, շփոթելով ի-
րենց զոհին, ուղղակի հարց եյին դնում նրա
առաջ. կամ գործիր մեզ համար, կամ մենք
քեզ կվոչնչացնենք: Յերբեմն նրանք, վա-
խենալով մերկացումքց, գործում եյին
դաշտնաբար և այնքան խորամանկորեն, վար
տեղեկություններ դուրս թոցնող միամիտ
ցանցառը չեր ել իմանում նույնիսկ, թե
ո՞ւմն ե նա հաղորդում այդ տեղեկություն-
ները: Նորերս լրագրներում տպված եր գրող
լ. Կասսիլի մի պատմվածքը, վորտեղ նկա-
ռագրված ե իսկական փաստ այն մասին, թե
ինչպես գերմանական շպիոնը ամառանցում
ապրող միջատներ հավաքողի անվան տակ
ձեռք եր բերել փոքրահասակ դպրոցական
աշակերտի վատահությունը, վորը խորհրդա-

յին ավիակոնստրուկտորի վորդի յեր, իմա-
ցել եր նրանից, թե վորտեղ են պահպում
հոր գրասեղանի բանալիները, վորի մեջ
գտնվում եյին գաղտնի, գծագրերը և, ծնող-
ների բացակայության ժամանակ, խեղերով
յերեխային վաննայի մեջ, գողաճում ե գո-
կումենտներն ու գծագրումները:

Վերջին ժամանակներս լրագրական հոդ-
վածներում և հատուկ գրքույկներում նկա-
րագրված են ճապոնական և գերմանական
հետախուզությունների նենգամիտ գործո-
ղությունների բազմաթիվ փաստեր: Հիշենք
այդ փաստերից մի քանիսը:

Լենինգրադի ուղմական շրջանի ավիա-
մասերից մեկը գաղտնի ուղարկված եր մի
լրտես ճաշարանի վարիչ: Նա հրաշալի կեր-
պով կազմակերպել եր հրամկազմի ճաշարա-
նի գործը, կերակրում եր համեղ, եժան և
լավ և հետզհետե ձեռք եր բերել մեծ վստա-
հություն: Ոգտվելով այդ վստահությունից,
նա ազատորեն շրջում եր զորամասի դասա-
վորության մեջ, դիտում եր գենքը, իմանում
եր ստորաբաժանումների թիվը, գաղտնի
լսում եր հրամանատարների ու կարմիր բա-

1584

ակայինների խոսակցությունները և այդ
բոլոր տեղեկությունները հաղորդում եր ո-
տար պետության հետախուզության ներկա-
յացուցչին։ Բացի գրանից, նա պատրաստ-
վում եր պատերազմի սկզբում թունավորել
բոլոր հրամանատարներին։

Լենինդրագում ապրում եր ճապոնական
շպիոն, վորն ուներ յերիտասարդ գեղեցիկ
աղջիկ։ Այդ աղջիկը ամուսնացավ մարտկոցի
հրամանատարի հետ, վորը տեղափոխեց
ապրելու իր աներոջ տունը։ Նրա մոտ հա-
ճախ հյուր ելին դալիս միենույն դնդում ծա-
ռայող իր ընկերները և լրտես աները գաղտ-
նի լսում եր նրանց խոսակցություններն ու
հաղորդում ճապոնական հետախուզության
ներկայացուցչին։ Հրամանատաւը չեր ել
ասկածում, վոր ինքն ապրում է լրտեսական
վորջում։

Մի քանի տարի առաջ Սմոլենսկում դա-
տում ելին մի լրտես կնոջ։ Նա ավարտել եր
լրտեսական հատուկ դպրոց, ազատ խոսում
եր չորս ոտար լեզուներով, շատ լավ գիտեր
որիմավորվելու, այսինքն դեմքը տարրել
գույներով ներկելու արվեստը։ Նրա դեկա-

վարությամբ աշխատում եր կին լրտեսների
մի ամբողջ խումբ։ Նրանք պարտավոր ելին
ծանոթություններ հաստատել զինվորական-
ների հետ, մտնել նրանց մոտ զո-
րանոցները և բնակարանները, գողա-
նալ լրտանկարներ և դոկումենտներ,
ձեռք բերել հարկավոր տեղեկություններ
ձեռն խոսակցություններից։ Ուրիշ լրտե-
նրանց խոսակցություններից։ Ուրիշ լրտե-
նրանց խոսակցություններ կաթ, ինձոր, ծխախոտ ծախիլու
պատրիակով մտնում ելին ճամբարները և
աշխատում ելին ստանալ և խմանալ հարկա-
վոր տեղեկություններ կարմիր բանակային-
ներից, դիտել ճամբարի դասավորությունը,
զենքի սիստեմն ու պահեստի տեղը և այլն։
Նրանց հաջողվում եր անել այդ այն դեպքե-
նրանց կարմիր բանակայինները հար-
րում, յերբ կարմիր բանակայինները հար-
կալոր չափով զգոն չելին լինում և յեն-
կալոր թաղելով, վոր մի մեծ վնաս չկա, յեթե
ճամբարի մոտ կանգնած ե «կաթ ծախողը»,
ճամբարի մոտ կանգնած ե «կաթ ծախողը»,
ընկերների կամ ծանոթների հետ խոսելիս։
Թե վորքան ճարակիկորեն են դիմավորվում
լրտեսները այդ յերեւում և թեկուզ այն բա-
լրտեսները այդ յերեւում և թեկուզ այն բա-
րից, վոր միայն 1936 թվին նԴԺԿ-ի որդան-

Ները մերկացրին ճապոնական մի շպիռնի, վորը ներս եր թափանցել Լենինգրադ քան տարի առաջ, 1916 թվին: Առաջին տարիները նա, ճապոնական հետախուզության ցուցմունքով, վոչ մի շպիռնական աշխատանք չեր կատարում, վորաբեսզի վստահություն ձեռք բերի: Հետախուզությունը դիտավորյալ ձեռք չեր տալիս այդ խոշոր լրտեսին, վորապեսզի ամբողջովին ոգտագործի նրան, յերբ պատերազմն սկսվի: Տրոցկիստական բանդայի դատով՝ 1937 թվի հունվարին դատվեց և զնդակահարվեց գերմանական լրտես Գրաշեն, վորն ապրում եր Ռուսաստանում և ապա ԽՍՀՄ-ում ընդմիջումներով՝ 1909 թվականից: Գրաշեն խոստովանել եր, վոր այն բոլոր մասնագիտությունները, վոր նա վերագրել եր իրեն, հնարովի բաներ են, իսկ նրա միակ խսկական մասնագիտությունը՝ լրտեսությունն ե: Այսպիսով Գրաշեն լրտես ե յեղել համարյա 30 տարվա ընթացքում: Նա լրտեսում եր գեռ ևս ցարական Ռուսաստանի դեմ, բայց ել ավելի ատելությամբ և կատաղությամբ նա փորձում եր վիժեցնել

Դերմանիան և Ճապոնիան ԽՍՀՄ-ի վաղուցված թշնամիներն են։ Պատերազմական դաշնամբը Գերմանիայի և Ճապոնիայի մեջ, վոր կնքված է 1936 թվին, ըստ Եյության հանդիսանում է մի տեսակ արդեն առաջուցյաղած համաձայնությունների չարունակություն։ Դեռ ևս 1918 թվին «Պրաեդա լրագիրը մերկացրեց այն գաղանի պայմանագիրը, վոր կնքել ելին գերմանական և ճապոնական կառավարման վերաբերյալ» միասին մեր հայրենիքի վրա հարձակվելու մասին։ Այդ պայմանագիրը մեր թշնամիները կնքել ելին իսկուն և յեթ, ևնոց վոր մեր յերկրի բանվոր դասակարգը 1917 թվի հոկտեմբերին կատարեց սոցիալիստական հաղթական համակարգությունը։

Գերմանական և ճապոնական հետափուլությունները միշտ ել աչքի յեն ընկել իրենց բացառիկ նենդությամբ և խորամանկությամբ։ Ֆաշիստական Գերմանիայի պարագլուխների մեծամասնությունը իրենք տարրեր ժամանակներում զբաղվել են լրտե-

սությամբ։ Գերմանական հետախուզության գլուխ և կանգնած ներկայումս գեներալ Նիկոլային, վորը կազմակերպել և դեկալարել ե գերմանական լրտեսությունը 1914—1918 թ. թ. Համաշխարհային պատերազմի ժամանակի։ Ճապոնիայում խոչըրագույն քաղաքական գործիչների և մանավանդ գեներալների մեջ հաղիվ թե գտնվի մեկը, վորն իր ժամանակին լրտես յեղած չլինի։ Հատայսմ ճապոնական լրտեսների աշխատանքը դրված է առանձնապես խորամանելորեն։ Խոչըրագույն, աչքի ընկնող ովկցերներին ճառապնացիներն ուղարկում են լրտեսական աշխատանքի վորպես լակեյների, նաևստիների, վարապելիների, դռնապանների հյուրանոցներում, մատուցարանների ճաշարաններում և այլն։

Ամենուրեք, բոլոր յերկրներում— ԽՍՀՄ-ում, Խսպանիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում, Փաշխտական հետախուզությունների առաջին ագենտներ են հանդիսանում տրցկիստական սրբկաները։ Խսպանիայում նրանք լրտեսում են հոգուտ Փաշխտական խոռվարանների, վորձում են քայլայել հե-

ղափոխական զորքերի թիկունքը, կազմակերպում են ազատամրություններ թիկունքում և այլն։

Թշնամիների նենդության մասին միշտ ել պետք ե լավ հիշել։ Լրտեսի ճակատին գըրմած չե, թե ով և նա։ Լրտեսը կարող է մած ամեն տեսակ դիմակ, ձևանալ լավակրել ամեն բարեկամ։ Յուրաքանչյուր կուսակդույնական և անկուսակցական բոլեվիկինց, յուրաքանչյուր խորհրդային քաղաքացուց և դարմանավանդ հայրենիքի պաշտպանից, — Կարմիր Բանակի մարտիկից— պահանջմում և մեծագույն գգոնություն, վորպեսզի նա մերկացնի շպիոններին, Հանձնի նրանց ՆԳՖԼ-ի կազմի շպիոններին, Հանձնի նրանց ՆԳՖԼ-ի սոսոր որպանների ձեռքը և կտրի թշնամիների սոսոր որպաններուն գգոնությունը։ Զգոնությունը կրկնական պարտականություն է հանդիսանում ժամանակակից համար, վորը պաշտպանում է իրեն մարտհի համար, վորը պաշտպանում է իրեն մարտհի համար։ պոստը թշնամիների հարձակումից։

ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆՆ—ԱՄԵՆԻՑ ՍՌԱՋ

Հարուստ և և հզոր մեծ Հայրենիքը։ Ուրախալի յե ապրել այստեղ, ուրախալի յե աշխատել։ Վոչ մի թշնամի չի կարող յերեաշխատել։

մել մեր հղորությունը։ Վորտեղից ել վոր
հարձակվեն մեղ վրա թշնամիները, նրանք
կջախջախվեն և կվոչնչացվեն հենց իրենց
սեփական հողի վրա։ Նույն վիճակը, —
անխնա ջախջախում, — սպասում են թշնամու
յուրաքանչյուր ագենտին։

Թշնամիները կարծում ենին, վոր Կարմիր
Բանակում ցեկալարող և բարձր դիրքերի
նստած ռազմա-լրտեսական բանդայի մերկա-
ցումը առաջ կրերեր մեր շարքերում
իրարանցում։ Ինչպես միշտ, թշնամիներն
անհուսալի կերպով սիսարկեցին։ Շպիոնների
մերկացումը առաջ բեռեց մեր ժողովրդի
ամելի ևս մեծ համախմբումը խորհրդային
հառավարության, կոմունիստական կու-
սակցության և սիրելի առաջնորդ ընկեր
Ալեքսանդրի չուրջը։ Թշնամիների մեքենայու-
թուններին ժողովուրդը պատասխանեց
ժեռամուռ կերպով բաժանորդագրվերով
ԵՍՀՄ-ի պաշտպանության ամրացման փո-
խառությանը։ Հաստատուն կերպով կատա-
րելով ստալինյան ցուցմունքը, ԽՍՀՄ-ի
աշխատավորներն ուժեղացնում, բարձրաց-
նում են իրենց զգոնությունը։

Հեղա Փախական, զգոնությունը հանդի-
սանում են ենց այն հատկությունը, վորը
հատկապես այժմ անհրաժեշտ է բոլեսկի-
ներին։

Ըսկեր Ստալինի այդ ցուցմունքը պետք է
ամուր կերպով հիշե Կարմիր Բանակի յու-
րաքանչյուր ժարտիկ և առաջին հերթին
որանք, ովքեր կատարում են պահակային
ծառայություն, պաշտպանում են ուսմանը
և կանգնած են ժամապահի պոստում։ Ու-
սագության, աշալլջության և զգոնության
ամենաչնչին թուլացումը ժամապահի կող-
ման ազգային կարող և ոգտագործել թշնամին և վնա-
սել բանվորների և գյուղացիների սոցիալիս-
տական հայրենիքին։

Պաշտպանության մեր սիրելի նարկոմ
Խորհրդային Միության առաջին մարշալ
ընկեր Կլիմենտ Յեֆերմովիչ Վորոչելովն իր
№ 96 հրամանում 1937 թվի հունիսի 12-ից
հաղորդելով ռազմա-Փաշխատական բանդայի
ջախջախման և լուծարման մասին, գրել եւ.

«Բանվորա-Դյուղացիական Կարմիր Բա-
նակը, խորհրդային իշխանության հավատա-
րիմ և հուսալի պատվարը, անինս հերձում

և այդ պալարն իջ առողջ մարմնի վրա և
արագորեն վերացնում է այն; Թշնամիները
իրենց հաջում սխալեցին: Նրանք չեն տես-
նի Կարմիր Բանակի պարտությունը: Կար-
միր Բանակն յեղել և և կմնա անպարտելի:
Համաշխարհային Փաշիզմն այս անդամ ևս
կիմանա, վոր նրա հավատարիմ աղենտները,
դամարնիկներն ու տուխաչեսկիները, յա-
կիբներն ու ուրորեկիները և այլ դավաճա-
նական լիշերը, վորոնք լակեյաբար ծառա-
յում ելին կապիտալիզմին, ջնջված ևն աշ-
խարհի յերեսից և նրանց հիշատակը կանիծ-
վի և կժռուացվի:

Ընկերներ.

Կարմիր Բանակը կա և միշտ ել կլինի ար-
յունը և մարմինը հաղթած ժողովրդի, վորը
կառուցում և նոր սոցիալիստական կյանք:
Մենք մաքրում ենք մեր շարքերը Փաշիստա-
կան-լրտեսական դարշանքից և այլև թույլ
չենք տա այդ խայտառակ փաստերի կրկնու-
թյունը: Մաքրելով մեր բանակը նեխած
աղտոտությունից, մենք դրանով դարձնում
ենք այն եւ ավելի ուժեղ և անխոցելի: Բա-

նակն ամբանում և նրանով, վոր մաքրում և
իրեն ապականությունից:

Կարմիր Բանակը պարտավոր և կունենա
մինչև վերջը ազնիվ, բանվորների և դյուլա-
ցիների գործին նվիրված, իր իսկական հրա-
մանատարական պետերի կազմը:

Կարմիր Բանակն ամբողջովին, կարմիր բա-
նակայինից մինչև բարձր պետը, յեղել և,
կա և միշտ կմնա միասնական հղոր, միաձույլ
մարտական կոլեկտիվ:

Զիս տեղ և յերբեք չի լինի մեր
բանակի շարքերում դավաճաններին, յերդ-
մանը և հայրենիքին դավաճանողներին:

Ընկերներ, տասնամբառենք բոլեվիկյան
զգոնությունը, բարձրացնենք և արմատա-
ղես բարելավենք մեր աշխատանքը բոլոր
հյուղերում, բարձրացնենք ինքնաքննադատու-
թյունը և դրանով արագացնենք ժողովրդի
թշնամիների աշխատանքի հետևանքների լիա-
կատար վերացումը»:

ՆԳԺԿ-ի որդանները ԽՍՀՄ-ի ներքին
գործերի ժողովրդական կոմիսար, Ընկեր
Ստալինի հավատարիմ զինակից, պետական
անվտանգության գլխավոր կոմիսար ընկեր

Նիկոլայ Խվանովիչ Յեժովի զեկավարությամբ մերկացրել և վերացրել են բազմաթիվ լրտեսական վորջեր և առանձին լրտեսների: Այդ գործում մեծ ոգնություն են ցույց տվել Նժմկ-ի որդաններին մեր հայրենիքի աշխատավորները:

Բայց մի՞թե արդեն բոլոր լրտեսները բռնված են և վերացված: Իհարկե, վոչ: Թշնամին դիմակավորվում են նրբորեն, վարպետորեն, խորամանկ կերպով: Բայց դրանից, «տապալված» լրտեսների փոխարեն ոտարերկրյա հետախուզությունն ուղարկում են նորերին: Ահա թե ինչու յուրաքանչյուր մարտիկի, յուրաքանչյուր խորհրդային քաղաքացու պարտականությունն եւ վոչ մի բոպե չըթուլացնել զգոնությունը, ոգնել պրոլետարական դիկտատուրայի որդաններին՝ բռնոտել և վոչնչացնել լրտեսներին:

Ստալինյան Սահմանադրությունն ասում է .
«ՀՈԴՎԱԾ 133: Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու սրբազն պարտքն ե: Հայրենիքին գավաճանելը—յերդումը խախտելը, թշնամու կողմնանցնելը, պետության ուղամական հզորու-

թյանը վնաս հասցնելը, լրտեսությունը՝ պատժվում են որենքի ամբողջ խստությամբ, վորպես ամենածանր չարագործություն»:

Խորհրդային Միության առաջավոր, արժանավոր քաղաքացիները որինակելի կերպով կատարում են Հայրենիքի պաշտպանության իրենց պարտքը: Ստալինյան կոչը՝ տասնապատկել զգոնությունը՝ առաջավոր բանվորները, կոլտնտեսականները, կարմիր բանակայինները կենսագործում են գործնականում, ոգնելով լրտեսներին բռնելու մեջ:

Ահա մի քանի որինակներ, վորոնց մասին նորերս հաղորդվեց լրագրերում:

ԽՍՀՄ-ի հարավ-արևմտյան սահմանում ապրում ե յերկաթուղային բանվոր Արտեմովի ընտանիքը: Ընտանիքը մեծ ե, — հայրը, մայրը, յերկու հասակավոր տղաները և յերկու սովորող աղջիկները: Այդ ընտանիքն ոգնել է կարծ միջոցում կալանավորելու առողջությունը կատարելու համար: Են վերի քան 100 հոգու, վորոնք խախտել են սահմանն անցնելու որենքը: Նույնիսկ փոքր աղջիկը, ինն տարեկան աշակերտուհին, սղնել է բռնելու հինգ լրտեսի:

Աւրիշ որինակ: 1937 թվի հունիսին ԽՍՀՄ-ի
Հյուսիս-արևմտյան սահմանում տեղի ունե-
ցավ հետեւյալ դեպքը: Փայտահատների ան-
տառային խուլ խրճիթին, վորը դժոնվում է
սահմանային ուղեկալից 12 կիլոմետր չե-
ռավորության վրա, մոտենում են հինգ ան-
հայտ տղամարդիկ: Խրճիթում այդ ժամանակ
գտնվում ենին ծերունի կոլտնախականներ
Յեղոր Կոպիլովը և Մատրյոնա Սեմենովան:
Անձանոթները մահելով խրճիթը, կոպիտ
կերպով հրամայում են պատրաստել անկո-
ղին իրենց համար: Ծերունիները համաձայ-
նում են և զնում են չոր խոտ բերելու: Յե-
ղոր Կոպիլովն առանց շտապելու, սկսում
ե խոտը բերել, իսկ Մատրյոնա Սեմենովան
չնայած իր 65 տարիներին, վազում է ուղե-
կալի մոտ: Մինչ ծերունին պատրաստում եր
անկողինները և զրադեցնում եր անկոչ հյու-
րերին խոսքերով, Մատրյոնան հայտնվում
է ուղեկալում (զառակ) և պատմում է
սահմանապահներին ամեն ինչ: Լուսաբացին
անձանոթներն արագությամբ թողնում են
խրճիթը և թագնվում են իիտ անտառում:
Բայց Յեղոր Կոպիլովը հետեւում է, թե ուր

են գնում նրանք: Յերբ սահմանապահները
սրարշավ գալիս են, կոպիլովը տանում է
մարտիկներին թարմ հետքերով: Գիշերային
այցելուները դուրս յեկան մի ոտարերկրյա
պետության լրտեսներ:

«Կրանա զվեզդա» լրագրում, մայիսի վեր-
ջին նկարագրված ե մի հետաքրքրական
դեպք, թե ինչպես յերկու կրտսեր հրամա-
նատարներ բանեցին լրտեսին:

Հանդստի որը 55-րդ հրաձիգ գնդի կապի
ստորաբաժնման կրտսեր հրամանատարներ
ի. Յ. Կողլովը և Գ. Ս. Տոլստիխը գնում
են պուրակն զրունելու: Նրանց մոտենում է
մի անհայտ մարդ և խնդրում է թույլ տալ
ծխելու: Հետո սկսում է հարցումփորձ անել
ծառայության մասին կարմիր թանակում,
հետաքրքրվում է զինվորական մասի դրու-
թյամբ, փորձում է խմանալ հրամանատար-
ների աղդանունները: Հայտնի բան է, ան-
ծանոթը, վորն իրեն Կոնովալով եր անվա-
նում, չի ստանում կրտսեր հրամանատարնե-
րից իրեն հետաքրքրող հարցերի, վորոնք ա-
ռաջին նվագ թվում եյին պատահական,—
պատասխանները: Այդ ժամանակ մոտենում

և մի անհայտ մարդ ևս և տալիս և կոնովալովին փողը: Կոնովալովին իսկույն առաջարկում և կողղովին և Տոլստիխին, վոր գնան «քեզ անելու»: Կողղովը և Տոլստիխը հասկանում են, վոր գործ ունեն կառկածելի անձի հետ: Նրանք բռնում են նրան և ուղարկում են ՆԳԺԿ-ի որգանները: Այստեղ շուտով պարզվում են անձանոթի ով լինելը: Նա տրոցիկստ եր և չպիոն: Փողով նա փորձում եր իմանալ ուազմական գաղտնիքը: 55-րդ հրաձիգ գնդի հրամանատարությունը հրամանի մեջ նշում և հեղափոխական զգոնության որինակը, վոր հայտաբերել էյին կրտսեր հրամանատար կոմյերիտական կողրվին ու Տոլստիխը և յերկուսին ել հայտնում և շնորհակալություն:

Շպիոններին և դիվերսանտներին մերկացնելու և կալանավորելու առանձին հմտության որինակներ են ցույց տալիս մեր սքանչելի սահմանապահները:

1937 թվի հունիսի 19-ի գիշերը սահմանապահ Բուրդինը և Տոմիլինը գտնվում եյին լեյտենանտ Անտոնովի տեղամասի պահանջական մարդում: Պոստում կանգնած մարդ

տիկինները լսում են, թե ինչպես մաշառուածի թիփի մեջ կոտրվեց չոր ճյուղը: Բուրդինը և Տոմիլինը լուս փոխանակում են հայացքներով: Վայրկյանաբար հասկանալով գործի եյությունը, նրանք սկսում են հետևել թշնամուն: Սահմանը խախտողները դուրս են գալիս յերկու հոգի: Վարպետորեն գիմակալու վելով, սահմանապահները մոտենում են խախտողներին սվինի հարվածի հեռավորությամբ և կալանավորում են նրանց: Խախտողների մոտ գտնում են պաշտպանության որյեկտոների լուսանկարներ և կարեոր լրտեսական տեղեկություններ:

1937 թվի հունիսի սկզբում սահմանային ուղեկալի ույոնում, վորի հրամանատարն եր լեյտենանտ Բարանովը, սահմանապահ լերեղելը և Խուզյակովը ուշ գիշերով գնում են պահակ: Առաջ շարժվելով մի թիֆց մյուսը, ականջ գնելով յուրաքանչյուր շուկի, նրանք հանկարծ նկատում են, վոր հեռավոր թիբերից մեկը մի տեսակ շարժվում է: Խուզյակովը պառկում ե իր տեղում, իսկ լերեղելը զգուշորեն սողում ե դեպի կասկածելի թուփը: Յերբ վոչ մի կասկած չունեցող

խախտողն ուզում եր արդեն անել վճռական
վոստուն գեպի սահմանը, Լեբեդիկ սվինը
դեմ և կանգնում նրա կրծքին: Զերբակալ-
վածը դուրս յեկալ մի փորձված հետա-
խույզ: Նա մի ամրող ամիս ուզում եր անց-
նել սահմանը, վորպեսդի հանձնի իր տերե-
րին ԽՍՀՄ-ում հավաքած իր լրտեսական-
տեղեկությունները: Խորհրդային խիզախ
դիտակալները բոնեցին լրտեսին հենց ուղիղ
սահմանի վրա: Ելի մի բոպե— և նա արդեն
կարող եր համարել իրեն ապահով:

Ինչո՞ւ կոլտնտեսականներն ու սահմանա-
պահները կարողացան մերկացնել և բռնել
շահուններին: Վորովհետեւ նրանք հայտարե-
րեցին խոկական բոլշևիկյան գդոնություն:

Բոլշևիկյան գդոնությունը ժամապահին ա-
ռաջադրվող գլխավոր պահանջն ե, նրա ա-
ռաջին և հիմնական պատգամը:

Ամեն մի պոստ կարևոր է: Վորտեղ ել վոր
կանգնած լինի ժամապահ— սահմանի գըլ-
իին, պահեստի մոտ, շտաբում, դրամարկու-
մուտ, կալանավորների մոտ կամ հասարակա-
կան կարգի պահպանության համար,— ա-
ռենուրեք նրա վրա ծանրացած և մեծ պա-

տասնինատվություն և նրանից պահանջ-
վում և անդուլ զգոնություն: Զգոնությունը
հարկավոր և միշտ, ամենուրեք և ամեն մի
պոստում:

Պոստում կանգնած կարմիր բանակային
ժամապահը պետք է հիշի, վոր նրան վստա-
հացել են մեր սոցիալիստական հայրենիքի
պաշտպանության մեծ և պատվավոր գործը:
Բանվորները, կոլտնտեսականները, մեր յերկ-
րի բոլոր աշխատավորները պետք է հավա-
տացած լինեն, վոր մեծ Խորհրդային Միու-
թյան սահմանները հուսալի կերպով պատրս-
պարված են և պաշտպանված, վոր Կարմիր
Բանակի ժամապահները զգոն և աշակուրջ
հետեւմ են և պատրաստ են կանխելու և
հականարդված տալու խորհրդային ժողովրդի
խաղաղ աշխատանքի խախտման ամեն մի
փորձին:

Ժամապահն իր պոստում գործնականապես
կատարում է իր քաղաքացիական պարտքը
սոցիալիստական հայրենիքի պաշտպանու-
թյան գործում: Ժամապահին հանձնվում է
մեր առաջնորդների կյանքի պաշտպանու-
թյունը, մեր հայրենիքի քաղաքացիների

կյանքի պաշտպանությունը, պետական և
ռազմական գույքի պաշտպանությունը, սո-
ցիալիստական սեփականության պաշտպա-
նությունը, վորոնք մեր իրակարգի հիմքերն
են կազմում:

Կարմիր բանակային-ժամապահին ցույց ե-
տրվում մեծ վատահություն: Այդ վատահու-
թյունը նա պարտավոր է արդարացնել: Ան-
հոգությունը, անիութությունը և զգոնու-
թյան բացակայությունը պոստում ողնում են
դասակարգային թշնամուն:

Կարմիր բանակային-ժամապահը մինչև
վերջը պետք է նվիրված լինի իր հայրենիքին:
Հայրենիքին դավաճանելու համար մեր պրո-
լետարական գատաստանն առանձնապես խիստ
է պատճում— գնդակահարությամբ:

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՎԱԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ, — ա-
սում ե ԽՍՀ Միության կենտրոնական վորո-
շումը 1934 թվի հունիսի 8-ից, — այսինքն
այն գործողությունները, վոր կատարել են
ԽՍՀ Միության քաղաքացիներն ի վնաս
ԽՍՀ Միության ռազմական հզորության,
նրա պետական անկախության կամ նրա
տերիտորիայի անձեռնմխելիության, այն ե՝

լրտեսություն, — ռազմական կամ պետական
գաղտնիքի մատնում, թշնամու կողմն ան-
ցնելը, վախուսու կամ սահմանից այն
կողմը թռչելը— պատժվում են քրեական
պատժի բարձրագույն չափով— գնդակահա-
րությամբ և ամբողջ ունեցվածքի բռնագրա-
վումով, իսկ հանցանքը մեղմացնող պարա-
գաներում—10 տարվա աղատազրկությամբ*)
և ամբողջ ունեցվածքի բռնագրավումով:

Նույն հանցանքները, վոր կատարվում են
զինվորական ծառայողի կողմից— պատժ-
վում են քրեական պատժի բարձրագույն չա-
փով— գնդակահարությամբ և ամբողջ ու-
նեցվածքի բռնագրավումով:

Պատրաստվող կամ կատարված դավաճա-
նության մասին չհայտնելը զինվորական
ծառայողի կողմից պատժվում և 10 տար-
վա աղատազրկությամբ»:

*) ԽՍՀՄ Կենտրոնական 1937 թվի հունիսին բարձրագույն համար համ ձայն, պատժ, գեղադրույն չափը
հասցվել է 25 տարվա, հանցանքը մեղմացնող պա-
րագաներում: Հայրենին թարգմ.

Յուրաքանչյուր մարտիկ ասում եւ իր կարմիր բանակային յերգման մեջ.

«Յես պարտավորվում եմ... աչքիս լույսի պես պահպանել ժողովրդական և ռազմական գույքը փշացնելուց և Համբակումից» և «... Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովուրդների յեղայրության և սոցիալիզմի դործի համար մղած պայքարում, չխնայել վոչ իմ ույժերը, և անդամ կյանքու։ Յեվ յեթե չար դիտակորությամբ հրաժարվելու լինեմ իմ այս հանդիսավոր խոստումից, թող ինձ վեճակվի ընդհանուրի արհամարհանքը և թող պատժի ինձ հեղափոխական որենքի անողոք ձեռքը»։

Նվիրվածություն Հայրենիքին, զգոնություն, յերկաթյա կարգապահություն, հմտություն ռազմական գործում, — ահա ժամապահին առաջադրվող հիմնական պահանջներ։ Ժամապահը պետք է ունենա մեծ կամք, խելամտություն, հնարագիտություն և իր պատասխանատվության կատարյալ գիտակցությամբ կատարի հանձնված դործը։

Յուրաքանչյուր որը տալիս եւ մեզ ժամա-

պահների կողմից պահակային ծառայության պահանջների գերազանց կատարման բավականաչափ որբնակներ։ Յերիտասարդ մարտիկները մրցակցում են Հների հետ իրենց պարտականությունների ճշդրիտ և անխախտ կատարելում։ Ահա յերիտասարդ մարտիկների ծառայության որբնակելի կատարման յերեք որբնակ¹⁾։

1937 թվի մարտի սկզբին գիշերը № մասի պահակը պահպանում եր մարտական գույքի որբեկտներից մեկը։ Քաղաքն ընկղմված եր քնի մեջ։ Միայն լուսարձակների պայծառ ճառագայթներն եյին պատռում գիշերվածուշը, լուսավորելով պահպանվող որբեկտը։

Պահակն ուժեղացնելու համար հատկացված եյին դիտակալություններ։ Դրանցից մեկի մեջն եր գտնվում յերիտասարդ կուրսանու ընկեր Սիսնիկովը։ Նա զգոնությամբ ականջ եր զնում ամեն մի խշխոցի, մեծ ուշադրությամբ դիտում եր շրջակայքը։ Հանկարծ նա նկատեց մարդու կերպարանք։

1) Փաստերը վերցված են „Կрасная звезда“ և „Правда“ լրագրներից։

— Կա՛ց, ո՞վ ե գալիս, — բարձր ձայն
տվեց Սիտնիկովը:

Ստվերը նետվեց մի կողմ, անհայտն սկսեց
միախչել: Կուրսանտ Սիտնիկովը կը կին ան-
դամ դոչեց.

— Կա՛ց, կիրակեմ:

Նա ստիպեց փախչողին կանգ առնել, չե-
տո հրամայեց «Ձեռները վե՛ր»: Կասկածելի
անձանոթին տարան պահակատուն:

Յերիտասարդ կուրսանտներն առաջին ան-
դամն ելին գտնվում պահակում: Նրանք գե-
րազանց կերպով կատարեցին ծառայությու-
նը և ստացան շնորհակալություն բարձր
գգոնության և կանոնադրությունը ճշտիվ
կատարելու համար:

Հմտորեն և լավ են գործել մի ուրիշ գըն-
դում ընկերներ Շաբդամբեկովը և Կու-
բայելիքը: Գործն այսպես եր.

1937 թվի մայիսի կեսին անձրեային մութ
գիշերով գողերի շայկան հարձակվեց զնդի
պահեստի վրա: Հարձակվողներն, ինչպես
յերեւմ և, հույս ունեցին, վոր մար-
տիկների ճամբարները գնալուց հետո
պահեստը պահպանվում եր թույլ կեր-

պով: Նրանք չըջապատեցին պոստը,
բոլորովին մոտեցան գաղտադողի: Շայ-
կայի պարագալուխը բարձրացավ՝ իր ամբողջ
հասակով և ուղղվեց դեպի ժամապահը,
վորպեսզի գրավի նրա ուշադրությունը և
հնարավորություն տա մյուսներին հանկար-
ծակի հարձակվելու նրա վրա:

Բայցի ժամապահ ընկ. Շաբդամբեկովից,
պահեստի մոտ կանգնած եր ժամապահի ող-
նական ընկ. Կուլբայելիք:

— Կա՛ց, ո՞վ ե գալիս, — ձայն տվեց նա:
Անձանոթն ուշադրություն չդարձնելով
կանչելուն, գնում եր առաջ:

— Պառկի՛ր, կիրակեմ, — կը կին անդամ
ձայն տվեց կուրբայելիք:

Այն ժամանակ անձանոթը պառկեց:

Լսու յերեսութին գա աղդանշան եր մյուս-
ների համար: Ժամապահը նկատեց, վոր զա-
նազան կողմերից դեպի պոստն են սողում
մարդեկ: Ուսանց յերկար մտածելու նա ար-
ձակեց հրացանը: Գողերն սկսեցին փախչել:
Միայն շայկայի պարագալուխը մնաց իր տե-
ղում: Կուլբայելը բռնեց նրան: Շուտով ձեր-
բակալիվեցին շայկայի բռլոր անդամները:

Գիտունակության, գդոնության և հնարա-
պիտության բացառիկ որինակ ե ցույց տվել
մարտիկ Զերնիշևն այն զորամասից, վորի
հրամանատարն ե ընկ. Կուրբատկինը (Մի-
ջին-Ասիական ռազմական ըրջանում): 1937
թվի հուլիսի սկզբին ընկ. Զերնիշև կանգ-
նած եր սուստում վառողի պահեստի մոտ:
Նա սուլիչի միջոցով ձայն եր տալիս ժա-
մապահ Յակովինիշին: Հանկարծ Զերնիշև
նկատեց, վոր պատասխանող սուլիչը շատ
ավելի մոտիկից հնչեց, քան առաջ: Դա կաս-
կածելի թիւաց նրան: Նա կրկնեց իր սուլոցը
և նրան միաժամանակ պատասխանեցին յեր-
կու սուլոցով: Պարզ եր, վոր պահակների
միջև գտնվում եր մի յերրորդը: Զերնիշևն
սկսեց ուշիուշով դիտել վայրը և նկատեց
իսկ խոտի մեջ պառկած մի մարդու, վորն
արդեն սողացել եր յարափակոցի տակը:
Զերնիշևը նշան տվեց պահակատուն և ձայն
տվեց անծանոթին. «Կա՞ց»: Նա սկսել եր
հետ սողալ, բայց ժամապահը վրա հասավ:
Յերբ վրա հասավ պահակատես Պաշկոմը,
Զերնիշևն արդեն բռնել եր չարագործին:
Չորամասի հրամանատարը չնորհակալու-

թյուն հայտնեց պահակի ամբողջ կազմին
զգոնության համար:

Այդ վաստերը կրկին և կրկին անգամ
հաստատում են, թէ ինչքան անհրաժեշտ և
զգոնությունը պօստում, ինչպիսի աշալլջու-
թյամբ պետք ե հետեւի ժամապահը յուրա-
քանչյուր կասկածելի մարդուն: Ընկեր Ստա-
լինը նախազդուշացրել ե մեզ, վոր բանը
թշնամու քանակի մեջ չե, նրանում չե, վոր
թշնամիներն ավելի քիչ են, քան ազնիվ մար-
դիկ: Մի թշնամի, մատնիչ կարող ե կատա-
րել այնպիսի մի վոճիր, վորի հետեվանք-
ները ծանրապես կանգրագառնան հազարա-
վոր և միլիոնավոր մարդկանց վրա: Ընկեր
Ստալինը Համկոմկուսի (բ) Կենտկոմի
վետրվարի-մարտի պլենումում արած իր զե-
կուցման մեջ նշել ե.

«Վատություն անելու և վնասելու համար
ամենելին ել չի պահանջվում մարդկանց
մեծ քանակություն: Դնեպրոստրոյը կառու-
ցելու համար հարկավոր և գործի գցել տաս-
նյակ հազարավոր բանվորներ, իսկ այն պայ-
թեցնելու համար պահանջվում ե թերեւ մի
քանի տասնյակ մարդ, վոչ ավելի: Պատե-

բազմի ժամանակ, վորպեսզի ճակատամարտը
շահվի, դրա համար կարող ե պահանջվել
կարմիր բանակայինների մի քանի կորպուս։
Իսկ վորպեսզի այդ շահումը ճակատում ճա-
խողվի, դրա համար բավական ե մինեն մի
քանի լրտեսներ վորքե տեղում բանակի շտա-
բում կամ նույնիսկ դիմիլիքի շտաբում,
վորոնք կիարողանան գողանալ ոպերատիվ
պլանը և հանձնել հակառակորդին։ Յերկա-
թուղային մեծ կամուրջ կառուցելու համար
պահանջվում են հաղարավոր մարդիկ։ Բայց
նրան պայմենեցնելու համար բավական են ըն-
դումնենը մի քանի հռոմի։ Կարելի յեր տասնյակ
ու հարյուրավոր այդպիսի որինակներ բե-
րել։

Պահակ, ամուր հիշիր մեր սիրելի և իմաս-
տուն առաջնորդի ցուցմունքները։

ՀԵՐՈՍՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՊՈՍՏԵՐՈՒՄ

Կարմիր բանակի փառապանծ պատմու-
թյունը գիտի բազմաթիվ հերոսական քա-
ջագործություններ ժամագահների, վորոնք
չեն ճգել իրենց պոստերը, չնայած ամեն
տեսակ վտանգներին։

Քաղաքացիական կովի տարբներում, յերբ
սպիտակ գվարդիականները վերցնում ենին
կազանը, գնդի պահեստի մոտ պոստում
մնացել եր մի ժամապահ։ Անոպասելի նա-
հանջի ժամանակ նրան չելին կարողացել
հանել պոստից, իսկ ինքը հավատարիմ մնա-
լով հեղափոխական պարտքին, չեր թողել
պոստը։ Պատմությունը չի պահպանել այդ
հերոսի անունը, բայց կազանի բնակիչների
պատմությունը, վորոնց աչքի առաջն և նա
արիաբար սպանվել, տարածվել և ամբողջ
յերկրում։ Բնակիչները պատմում ելին, վոր
սպիտակները քաղաքը մտնելուց հետո ժա-
մապահը պահ կացած թափթփված սայլերի
հետեւում, կես ժամ հրացան արձակելով
պաշտպանվում եր հարձակվող սպիտակ
գվարդիականներից և մեռնում և ստացած
վերքերից, առանց թողնելու իր պոստը։

1919 թվի հոկտեմբերին նույնպես չի թո-
ղել իր պոստը չտապ նահանջի ժամանակ
մոռացված Գատչինայի հեռախոսային կա-
յանի որապահ ընկեր կարպովը։ Նա մինչեւ
վերջին ըովեն տեղեկություններ հաղոր-
դում եր Դեսսկոյե Սելո հեռախոսով Յու-

գենիչի զորամասերի գործողությունների
մասին։ Ընկեր Կարլովին սպանում են ա-
պարատի մոտ Գատչինա խուժած սպիտակ
գվարդիականները։

Խաղաղ ժամանակ պահակները նույնպես
հերոսաբար պաշտպանել և պաշտպանում են
իրենց պոստերը։

Մոսկվայում Դանիլովսկի շուկայի մոտ
ձգված են կարմիր բանակայինների Զեր-
նիշևկի կոչված զորանոցների մեծ ու լայ-
նարձակ կորպուսները։ Հաղիվ թե շատերին
ե հայտնի, վոր զորանոցներին հատկացված
անվան մեջ հավերժացված ե կարմիր բանա-
կային Զերնիշևի հիշտակը, վորն հերոսա-
բար ընկել ե ժամապահի պոստում։

Տեղի ունեցավ այդ 1923 թվին։ Քաղաքա-
ցիական հաղթական պատերազմը վերջացել
եր։ Մեր յերկիրն սկսել եր վերականգնել
յերկու սլատերակմներից քայլայլած ժո-
ղովրդական տնտեսությունը։ Զինված կովկի
մեջ ջախջախված դասակարգային թշնամին
փոխել եր զենքն ու պայքարի միջոցները։
Դասակարգային թշնամիները փորձում ելին
վիժեցնել սոցիալիզմի կառուցումը դա-

վաղը ություններով, հրձգումներով, պայ-
թեցումներով, վնասարարությամբ, թիկուն-
քից հասցրած ստոր հարվածներով։

1923 թվականի ամառը թշնամիների ձեռ-
քով հրդեհվեց հրետանային պահեստը Կո-
լոմնայում, Մոսկվայի մոտ։ Կրակն արա-
գորեն բռնեց ամբողջ պահեստը։ Բոցը թա-
փանցում եր ոռում բերի պահեստանոցը։ Հար-
յուրավոր փութով վառող պայթեցին և ողը
ցնդեցին։

Հեռվում № 2 պոստում պահեստը շրջա-
պատող լարի մոտ կանգնած եր վորպես ժա-
մապահ կարմիր բանակային Զերնիշևը։ Ա-
ռաջին իսկ պայթյունի ժամանակ նա բռնում
և աղդանիշ զանգակի թոկը և անդադար
զանգահարելով, սկսում ե կանչել պահակա-
պետին։ Զերնիշևը լավ գիտեր, վոր ոռու-
մբերի բեկորները և պայթյունների ույժից
ցրվող փայտի և շինությունների կտորատանք-
ները կհասնեն և իր պոստին։ Զերնիշևը
նույնպես լավ գիտեր ե այն, վոր առանց պա-
հակապետի կամ փոխադիրի թույլտվու-
թյան նա իրավունք չունի թողնելու իր պոս-
տը։

Ծխի թանձը ամպերի հետևից Զերնիշեր
չեր տեսնում հարևան պոստերի ժամապահ-
ներին, բայց նա շարունակում եր համառո-
րեն զանդահարել և կանչել: Նրա ձայնն ու
զանդահարությունը խեղդվում ելին պայ-
թյունների ընդհանուր դղրդոցի, կրակից
առաջացող աղմուկի և թռչող ու պայթող
ուռմբերի սուլոցի մեջ:

Անսպասելի կերպով ծխի մեջ յերևաց պա-
հեստապետի ողնականը: Նա վագում եր կի-
սախանձ հագուստով, առանց գլխարկի, քա-
մուց ծածանվող մազերով:

— Հետեւի՛ր ինձ... յես քեզ կհանեմ... յես
յերը գիտեմ, — գոչում եր նա վազելով
Զերնիշերի մոտ:

Առաջին վայրկյանում Զերնիշեն ուղեց
վագել նրա հետեւից և փախչել: Բայց դա
միայն վայրկյանական տատանումն եր: Զեր-
նիշեր գոչեց.

— Առանց պահապետի կամ փոխադիրի
պոստ չեմ թողնի:

Զերնիշեր համար պարզ եր—նրա մահն
անխուսափելի յեր համարյա: Բայց նա հաս-
տատապես հիշում եր կարմիր բանակայինի


յերդման խոռըերը և լավ գիտեր ժամապահի
պարտականությունները: Նա մնաց մենակ:
Զերնիշեն իր պոստը չթողեց:

Յերբ հրդեհը հանդարավեց, Զերնիշենին
գտան ճղմված պոստի վրա թռած գերանի
տակ, վոր ընկել եր հրդեհից: Նրա մի ձեռ-
քում ամուր սեղմված եր հրացանը, իսկ
մյուսում՝ գտնվում եր ազդանիշ զանդա-
կի թոկի մի կտորը:

Հերոս ժամապահ Զերնիշեն թաղեցին
զինվորական բարձր պատվով, իսկ զորանոց-
ներին, վորտեղ մնում եր այն զորամասը,
վորի մեջ ծառայում եր նա, ուին նրա ա-
նունը:



1927 թվին ժամապահ կարմիր բանակային
Նիկիտենկոն իր պաշտպանության տակ
գտնվող պոստի վրա չարագործների հար-
ձակման ժամանակ ստանում ե ծանր վերքեր:
Նիկիտենկոն արյունաշաղախ վայր ե ընկնում:
Նրա ձախ ձեռքը գնդակահարված եր: Պառ-
կած դրության մեջ նա շարունակում եր մի
ձեռքով լցնել հրացանը և կրակ վարել հար-
ձակվողների վրա պաշտպանելով պոստը մին-



Ծխի միջից երեաց պահեստապետի
ոգնականը...»

չե փոխանորդի գալը: ՅԵՐԲ Նիկիտէնկոն
լսում ե վրա հասնող ընկերների հրացանաձը-
գությունը, նրա ուժերն սպառվում են և նա
ուշաթափվում ե:

1930 թվին գտնվելով հրետանային պա-
հեստի պահակի կազմում, կրտսեր հրամա-
նատար ընկեր Պետրենկոն հայտաբերում ե
բացառիկ հնարամտություն և հերոսական
խիզախություն: Գնալով հերթափոխողների
հետ պոստը, Պետրենկոն նկատում ե ծածկի
տակ քանվող ոռումբերի կույտի միջ ծխացող
ոռումք: Շվարած հերթափոխողները կանգ են
առնում, չեն իմանում; ինչ անեն: Պետրեն-
կոն չի կորցնում իրեն: Նա արագությամբ
անցնում ե յերկաթյա լարի միջով, զգուշո-
րեն դուրս ե հանում կույտի միջից ծխացող
ոռումը և իր կյանքի համար մեծ վտանգի
տակ դուրս ե բերում նրան լարի միջից և տա-
նում ե ծորակի մոտ և ոռումը թաղում չըրի
տակ: Իր հնարամտությամբ և հերոսու-
թյամբ Պետրենկոն կանխում ե անխուսափելի
պայթյունը և ժողովրդական արժեքավոր
գույքի կործանումն ու ազատում ե պահես-
տի բանվորների և պահակի կյանքը:

բանդիտներից ութին և կասեցնում մյուսներին: Ազնությունն հասնելուց հետո բանդիտների ամրողջ շայկան լիովին վոչնչացվում է: Բնկ. Տրունովը կոմյերիտական է: Իր յերկու տարվա ծառայության ընթացքում նա վեց անգամ չնորհակալություն է ստացել իր մասի հրամանատարությունից: Բնկեր Տրունովը ցանկություն է հայտնել մնալու սահմանապահ՝ զորքերի մեջ՝ մինչև մահը ծառայելու համար:

Ժամապահների ծառայությունը սահմանի վրա, ծանր և վտանգավոր պարագայում, առանձնապես ցայտուն կերպով հաստատում ե պահակային ծառայության կանոնադրությունն այն մասին, վոր՝

«Պահակային ծառայություն տանելը հանդիսանում է մարտական խնդրի կատարում» (ԲԳԿԲ-ի պահակային ծառայության կանոնադրության 2-րդ հոդված, 1936թ.):

1929 թվին, յերբ սպիտակ-չինական յելուազակները և ուռաւական սպիտակ գվարդիականության տականքները փորձեցին հեռավոր Արևելքում պրովոկացիոն հարձակումով մեղ պատերազմի քաշել, նրանց առաջին հար-

վածն ուղղված եր կարմիր սահմանապահների դեմ: Հենց նրանք եյին, սահմանապահները, մեր մեծ հայրենիքի սահմանների փառապահն և հավատարիմ ժամապահներին եր վիճակված առաջինը դիմանալու թշնամու ճնշմանը: Հեռավոր-արևելյան սահմանի տեղամասերից մեկում ժամապահ-սահմանապահ ընկեր Սկրիպկոն յերկու ընկերների հետ համարյա յերկու ժամվա ընթացքում կասեցնում ե սպիտակ-չինական բանդաների առաջավոր ջոկատների ճնշումը, մինչև վորուղեկալից ոգնություն հասավ:

Հեռավոր արևելյան սահմանապահները հաճախ են ստիպված լինում ընդհարվել թշնամական յելուզակների հետ, վորոնք փորձում են անցնել սահմանը:

1935 թվի հոկտեմբերի 12-ին յերկու հեծյալ սահմանապահներ նկատելով նովո-Ալեքսեևկայի ռայոնում ճապոն-մանջուրական մի համահավաք ջոկատ, վորն անցել եր մեր սահմանը, սկսում են ազդանշաններ տալ նրան, վորպեսզի նա վերադառնա իր յերկիրը: Ճապոն-մանջուրները պատասխանում են հրացանաձդությամբ: Միայն ոգնության

Հասնող մեր յերկու սահմանապահ խմբերը
հետ են քըում յելուզակներին խորհրդային
տերիտորիայից։ Այդ կովում սպանվում է
կրտսեր հրամանատար ընկեր Կոտելնիկովը
և վիրավորվում են ընկերներ Վլագը և Դեմ-
չուկը։ Ընկեր Կոտելնիկովն սպանվում է իր
պոստում, վորպես հերոս։ Նրա հերոսու-
թյունը գիտե ամբողջ Խորհրդային Միու-
թյունը։ Ընկեր Կոտելնիկովին փոխարինելու
համար ծառայության ժամկետից առաջ հր-
ժարակամ գնում է նրա յեղբայրը—Դոնբասի
բանվոր, վոր պաշտպանի մեր սահմանը։
Այժմ նա արդեն ծառայում է վորպես ջոկի
հրամանատար այն ուղեկալում, վորտեղ ծա-
ռայել է նրա յեղբայրը և վորն այժմ կրում
է սպանված Վալենտին Կոտելնիկովի անունը։
Իրենց սպանված սահմանապահ-յեղբայրնե-
րին փոխարինելու յեն գնացել նաև ընկերներ
Լազորան, Պանչենկոն, Զերնիսը և ուրիշ-
ները։

Հերոսության և հայրենիքի նվիրվածու-
թյան որինակի հաւար խորհրդային իշխանու-
թյունը պարզեատրել է Հեռավոր Արևելքի

սահմանապահ զորամասին Կարմիր Դրոշի
շքանշանով։

Ինչո՞ւ յեն այդպես անձնվիրաբար և քա-
ջությամբ զոհում իրենց կյանքը մեր հերոս-
ժամապահները։ Վորովհետև նրանք աշխա-
տավոր ժողովրդի վորդիներն են, մեծ սո-
ցիալիստական պետության բանվորների և
դյուզացիների վորդիները, վոր կոչված են
զենքը ձեռին մինչև արյան վերջին կաթիլը
պաշտպանելու իրենց հայրենիքը։

Սոցիալիստական հայրենիքի պաշտպանու-
թյունը կարմիր բանակային կյանքի բարձրա-
գույն որենքն է։

Հերոսների քաջադրությունը—որինակ
ե բոլոր մարտիկների համար, որինակ է յու-
րաքանչյուրի համար, թե ինչպես պետք է
կատարել պահակային ծառայությունը։ Այդ-
պես ել պետք է ձգտի լինելու ամեն մի ժա-
մապահ։

Յերբ յերկիրը կհրամայի լինել հերոս,
Մեզանում ամեն մեկը հերոս կդառնա։

ՄԵՆՔ ՓՈԽԱՆՈՐԴՈՒՄ ԵՆՔ ՊԱՀԱԿԸ

Աշխատավորները կոչվում են կարմիր բանակը ռազմական գործն ուսումնասիրելու և սոցիալիստական հայրենիքը զենքը ձեռքին պաշտպանելու համար։ Ստալինյան Սահմանադրության մեջ ասված ե.

«ՀՈՒՎԱԾ 132. Ընդհանուր զինվորական պարտականությունն որենք ե հանդիսանում։

Զինվորական ծառայությունը Բանվորական գուղացիական կարմիր բանակում ԽՍՀՄ-ի քաղաքացիների պատվավոր պարտականությունն ե»։

Յերբ յերիտասարդ կարմիր բանակայինն զերշացնում ե անհատական ուսուցումը, նրան, վորպես արժանավոր մարտիկի, կարող են կանգնեցնել պոստի վրա։ Այստեղ ստուգում են կարմիր բանակայինի գիտությունները ռազմական գործում, նրա նվիրվածությունը լենինի-Ստալինի կուսակդությանը և պատրաստակամությունը՝ հեղափոխության գործի համար, յեթե պահանջվի դուռը նույնիսկ իր կյանքը։

Ժամապահի կոչումը՝ պատվավոր կոչում

ե։ Պոստում կանգնեցրած կարմիր բանակայինն մեծ վատահություն են ցույց տալիս։ Հենց այդ պատճառով ել յերիտասարդ մարտիկներին ուղարկում են պահակ միայն այն ժամանակ, յերբ նրանք ստանում են համապատասխան պատրաստականություն և ապացուցում են իրենց ուսուցումով, վոր կարող են կատարել ժամապահի պարտականությունները։ Բգկի-ի պահակային ծառայության կանոնադրությունն ասում ե (Հոդված 145)։

«Արգելվում ե պահակ նշանակել այն մարտիկներին, վորոնք չեն անցել անհատական ուսուցումը»։

Ժամապահի ծառայությունը պատվավոր ե, դրա համար ել կարմիր բանակում արգելված ե ուղարկել պոստը անհերթ վորպես պատիմ։ Մի՞թե կարող ե պատիմ լինել ժամապահի պատվավոր և պատասխանատու պոստին նշանակվելը։ Այդ մասին կանոնադրության մեջ ասված ե (Հոդված 144)։

«Մարտիկներն ու հրամկազմը պետք ե հիմնավորապես յուրացնեն, վոր պահակային ծառայություն կատարելը պատվավոր և պա-

տասխանատու մարտական խնդիր և, ռւստի վճռականապես արգելվում է պահակ նշանակել զինվորական ծառայողներին վորպես կարգապահական պատրիժ (անհերթ)»:

Պահակային ծառայությունը որինակելի կերպով կատարելու համար հարկավոր և լավ իմանալ պահակային ծառայության խընդիրներն ու նշանակությունը, պահակի կազմակերպությունը և գիտակցորեն ու հմտութեն գործել, յեթե հարկ կլինի վանել չարագործների հարձակումը։ Պահակային ծառայության բոլոր կանոնները, ժամապահների իրավունքներն ու պարտականությունները դրված են ԲԳԿԲ-ի 1936 թ. պահակային ծառայության կանոնադրության մեջ (ԿՊԾ-36)։ Այդ նոր կանոնադրությունն ունի նշանակալից փոփոխություններ առաջին կանոնադրությունների համեմատությամբ։ Ժամապահների իրավունքներն ընդարձակված են, պահանջներն ավելացած։ Յուրաքանչյուր կարմիր բանակայինի պարտականությունն ե գերազանցորեն ուսումնասիրել կանոնադրությունը, գերազանցորեն իմանալ նրա պահանջները և որինակելի կերպով կատարել

այդ պահանջները, ինչպես վայել և Բանվորականվայրի կարմիր բանակի զինվորին։ «Պահակային ծառայության կատարությունը, — ասում է պահակային ծառայության կանոնադրությունը (Հոդված 2), — հանդիսանում է մարտական ինսդրի կատարում։ Պահակային ծառայությունը — Բանվորականվայրի կարմիր բանակի մարտական և քաղաքական պատրաստականության, կարմիր բանակայինների զգոնության և պատասխանատվության զգացմունքի դաստիարակման, ամբողջ բանակի հրամանատարական և վարչական կազմի կարեռագույն բաժիններից մեկն ե»։

Մենք արգեն տեսանք հերոս-ժամապահների գործողությունների առանձին որինականերից, վոր լավ ժամապահ կարող ե լինել միայն այն կարմիր բանակայինը, վորը գիտե պահակային ծառայության խնդիրները, պահակի կազմակերպությունը և գիտակցորեն և իրազործում կանոնադրության պահանջները։

Ի՞նչ է պահակը և ի՞նչպես է կազմակերպ-

ված այն : Կանոնադրությունն ասում է (Հոգված 4) :

«Պահակ կոչվում է ղինված զորախումբը, վորը նշանակվում է վորոշ ժամանակով պահպանելու և պաշտպանելու պահեստները, շենքերն ու այլ որյեկտները, կալանքի տակ գտնվող մարդկանց և պահպանելու հասարակական կարգը եր գտնված վայրի մոտերգում» :

Այդ խնդիրներն իրագործելու համար զորախումբը պետք է համապատասխան կերպով կազմակերպված լինի : Այդ զորախմբի (պահակի) պետն այդպես ել կոչվում է . պահակի պետ : Պահակն իր բնակավայրից դուրս դարւ վայրիյանից ամբողջ կազմով կատարելապես յենթարկվելում է պահակի պետին : Այդ վայրկյանից վոչ վոք անմիջական պետերից, բացի պահակի պետից, իրավունք չունին վորեւ հրաման տալու պահակի կրտսեր հրամանատարներին և մարտիկներին :

Պահակի պետը նշանակվում է հրամանատարական կամ վարչական անձերից—սկսած չոկի հրամանատարից և ավելի բարձր : Խո-

չոր պահակներում պահակի պետն ունենում է ոգնական կրտսեր հրամանատարներից մեկին : Յեթե պահակին տալիս են ծառայող ջներ, այն ժամանակ նշանակվում է և յերկրորդ ոգնական—հատուկ ծառայության գծով :

Ինչպես ամեն մի զորախումբ, պահակը բաժանվում է մի քանի ստորաբաժանումների : Յեթե պահակում չափ պոստեր կան, պահ պահակը բաժանվում է ջոկերի, յուրաքանչյուրն վոչ ավելի 15 հոգուց : Մի պոստի բոլոր պահակայինները մտնում են մի ջոկե մեջ : Ջոկի հրամանատարն է հանդիսանում վոխադիրը, վորին նշանակում են կրտսեր հրամանատարներից կրտ ամենից ավելի զարգացած ավագ ծառայող մարտիկներից :

Պահակում նշանակված մարտիկները տարբեր անուններով են կոչվում : Նրանք, վորոնք պետք ե կանգնեն պոստերում վորպես ժամապահներ, կոչվում են պահակային (կարայլենի): Կալանավորներին իրենց կալանավորման սահմաններում ուղեկցելու համար նշանակում են ուղեկից (վետօնոյ), իսկ կալանավորման վայրից դուրս ուղեկցելու համար նշանակում են ուղեկցորդ (կոնвой-

հետի): Բացի դրանից, պահակներն ուժեղաց-
նելու համար գիշերներն ամենից կարևոր
ոբյեկտներում, մառախուղի, բուքի, լուսա-
վորությունը փշանալու գեղքերում և այլն
նշանակվում են դետերը (ձօզօր): Դետերի
ժարտիկները կոչվում են դիտակալներ (ձօ-
զօրներ):

Ուղեկիցները, ուղեկցորդները և դիտա-
կալները նշանակվում են վոչ ամեն պահա-
կում, բայց պահակայինները լինում են ամեն
տեղ: Ժամապահ կանգնած պահակայինի
աշխատանքը ամենից կարևորն և պատաս-
խանատուն: Այդ աշխատանքին առանձնա-
պես խնամքով պետք է պատրաստվել:

Ի՞նչպես ե կատարմում պահակի նախա-
պատրաստումը: Վերնարդեն նշված եր, վոր
պահակ նշանակում են միայն այն մարտիկ-
ներին, վորոնք անցել են անհատական ուսու-
ցումը: Բացի դրանից, ըստ կանոնադրու-
թյան, վաշտի հրամանատարն ամեն մի պոս-
տի համար հատկապես շնորում ե համապա-
տասխան մարտիկներ: Որինակ, այն պոստի
համար, վորտեղից պետք է դիտել հեռու
տարածություն, վաշտի հրամանատարն ընտ-

րում և լավ տեսողություն ունեցող մարտիկ-
ներ: Ամենից ավելի կարևոր, հեռու տարա-
ծության վրա գտնվող, դժվարին պոստեր
րում նշանակվում են ամենից ժիր և ծառա-
յությունները:

Պահակ նշանակածներին բոլորին ել քննում
ե մասի բժիշկը, վոր հիվանդները պահակ
չընկնեն և ապա ստիպված չլինեն նրանց փո-
խարինելուրիչներով: Նշանակման որը բոլոր
պահակ նշանակածների հետ պարապում են
առանձին ծրագրով— ուսումնասիրում են
պահակի պարտականությունները և վճռում
են թուուցիկ խնդիրներ: Պահակ ուղարկվե-
լուց յերկու ժամ առաջ բոլոր նշանակված-
ները հանգստանում են կատարելապես:

Կուսակցական և կոմյեսիտական կազմա-
կերս ությունները ոգնում են հրամանատա-
րին, բացատրելով ժամապահի պատրակա-
նություններն ու նբան պատասխանատվու-
թյունը հայրենիքի առաջ:

Պահակ նշանակվելը մեծ պատիվ և մարտի-
կի համար: Այս պատճառով ել պահակ ու-
ղարկելը— պահակատես (развод) — տեղի
յն ունենում հանդիսավոր կերպով: Պահա-

կատեսին մասնակցում եւ փողավոր նվազա-
խումը:

Պահակատեսի ժամանակ պահակները կազմ-
վում են համարների կարգով, մի գծով, իսկ
ջոկերը պահակներում դասավորվում են
յերկու տողանով: Յուրաքանչյուր մարտիկ
պետք եւ հաստատապես հիշի իր տեղը ջո-
կում: Պահակի ջոկերը կազմվում են այս-
պես, ինչպես սովորական ջոկերը: Պատերի
բոլոր առաջին հերքափոխները կանգնում են
պոստերի համարների կարգով առաջին տո-
ղանում, բոլոր յերկրորդ հերքափոխները—
կանգնում են նրանց ծոծրակի դեմ յերկրորդ
տողանում, իսկ յերրորդ հերքափոխները—
դեպի ձախ, յերկու տողանով: Զոկի աջ
թեում—ջոկի հրամանատարը, փոխադիրը,
ձախ թեում—ուղեկիցները, ուղեկցորդները,
դիտականները: Ամուր հիշեցեք ձեր տեղները
պահակատեսում, վորպեսզի արագորեն բռնեք
այդ տեղերն, առանց խրտնվելու և չփոթու-
թյան:

Յերբ բոլոր պահակները հավաքվում և
շարք են կանգնում, նրանց մոտ եւ գալիս
պահակների որապահը, վողջունում եւ, ստու-



Պահակի կառուցվածքը:

գում և նրանց արտաքին տեսքը և պարտա-
կանությունների գիտենալը, խմբակարգի
կանոնավորությունը և մարտական պատրաս-
տուկանությունը: Ազա կանչում ե իր մոտ
պահակների պետերին և հանձնում ե նրանց
պարուը, այսինքն գաղտնի պայմանական
խոսքերը՝ պահակների փոխանակման և ըս-
տուգման համար: Հենց այդ իսկ վայրկյա-
նից, այսինքն պարուները համձնելուց հետո
պահակներն յենքարկվում են պահակների

որապահին (իսկ ներքին պահակներում — զորամասի որապահին)։ Այդ ժամանակից վոչ վոք անմիջական պետերից, բացի պահակների որապահից, պարետից և կայազորի պետից (իսկ ներքին պահակներում — զորամասի որապահից և զորամասի հրամանատարից), վոչ վոք իրավունք չունի հրամաններ տալու պահակի պետին։

Պահակի որապահին յենթարկվելուց պահակը դուրս է գալիս միայն այն ժամանակ, յերբ նա ավարտելով իր որապահությունը, մի որից հետո փոխվում է և պահակի պետը։ Հրահանգում ե. «Մա'րշ», իր մասը գնալու համար։ Յերբ պահակը վերադառնում է մասը և պահակի պետը հրամայում ե. «Ցրվե՛լ», պահակի մարտիկները անցնում են իրենց անմիջական պետերի յենթարկման տակ։

Պահակի պետերը ստանալով պարուները, վերադառնում են իրենց տեղը։ Պահակների որապահը հրաման է տալիս։ «Պահա՛կ աջ դարձ, զուգաշար կազմիր, ուսին (կամ փոկին), պահակներով, քայլով մարշ»։ Պահակները նվազախմբի մարշի նվազի տակ ուղղվում են դեպի նշանակված ոբյեկտները։

Իսկ ի՞նչպէս ե կատարված։ «զուգաշար կազմիր» հրամանը Հետեազորի 1934 թվի շաբաթին կանոնադրության մեջ այդ տեսակ շաբաթիոխություն չկա և դա կիրառվում ե միայն պահակների պահականուի ժամանակ։ Պետք ե կատարել այն հետեւյալ կարգով։

Առաջուց բոլոր մարտիկները համրում են «առաջին» և «յերկրորդ»։ Իր համրարը պետք ե լավ հիշել, մանաշանդ յերկրորդ տողանի մարտիկները, վորոնք իրենք չեն համրում, այլ միայն լսում են, թե ինչ համարներ են ասում առաջին տողանի մարտիկները։ Դեպի աջ դառնալուց հետո ըստ հրամանի՝ «զուգաշար կազմիր» պատճին տողանի առաջին համարները մնում են իրենց տեղը, յերկրորդ տողանի առաջին համարները կես քայլ առաջ նն անցնում, իսկ առաջին և յերկրորդ տողաների յերկրորդ համարները կատարում են շաբաթիոխությունը յերեք պրիոնով։

Առաջին պրիում կտրել հրացանի խզակոթը գետնից և զնել աջ վոտը մի ամբողջ քայլ առաջ։

Յերկրորդ պրիում, առաջ դնել ձախ վոտը

իր տողանի առաջին համարների գծով, դնդի
աջ նրանցից.

Յերրորդ պրիում. միայնել աջ վոտը ձա-
խին և հրացանի կոթն իշեցնել գետնին:

Ստացվում են նույն կազմը, ինչպես «քառա-
շար յերթասյունը», վորը, սակայն կատար-
վում են մի փոքր այլ ձևով: Այդ կազմով ել
պահակի պետը բերում են պահակը պահակա-
տուն, նորից շարում են այն մի գծով, ճա-
կատը դեպի շինությունը, իսկ ինքը մտնում
են նրը, վորակապի հայտնի հին պահակի
պետին պարուը: Պարուը ստուգելուց հետո
հին պահակի պետը դուրս են բերում իր պա-
հակը և կանգնեցնում են այն նորի դիմաց փո-
խադարձ վողջույնի համար: Դրանից հետո
յերկու պետերն ել հրամայելով: «Զգա՛սո»,
զեկուցում են պահակը հանձնելու և ընդու-
նելու պատրաստականությունը և սկսում են
փոխել պահակներն ու պոստերը:

Պահակների պետերի հրամանով պահա-
կատնոները կատարում են պոստերի բերանա-
ցի ընդունում, ստուգում են դրոշը, ստու-
գում են առաջին հերթի պահակայինների

գննքի կանոնավոր վիճակը և հրամայում են
ցնել զենքը:

Զենքը լցնելու կարգն ըստ կանոնադրու-
թյան (Հոդված 13) հետևյալն է.

«Հրացանների լցնելն ու դատարկելը կա-
տարվում են պահակի շենքում և անպատճառ
փոխադիրի, պահակապետի ողնականի կամ
շենց պահակապետի անմիջական հսկողու-
թյամբ: Պահակայինները լցնում կամ դա-
տարկում են իշենց զենքն ըստ հրամանի.
Անջից ձախ մեկական, լցրո՞ւ (դատարկիր):»:
Պահակի պետը, նրա ողնականը և փոխադի-
րը առաջինն են լցնում իրնց զենքը:

Հրացանները լցնում են չորս փամփուշտով,
վորսնք մտնում են վատիչ-անդրադարձիկը
զատող ատամի տակ»:

Այդ պահանջների նշանակությունը հաս-
կանալի յէ: Միմիայն զենքի լցնելու և դա-
տարկելու կանոնների հշերիտ պահպանու-
թյամբ կարելի յէ խուսափել պատահական
կրակոցից, դժբախտ զեպքերից, վիրավո-
րումներից և այլն:

Յերր զենքը լցված է, փոխադիրները տա-
նում են իրենց հերթափոխներին պոստերը

սյունաձև միաչար։ Պահակ Հերթափնյութ-
թյան առաջավոր պահակայինի կողքին, նրա-
նից գետի ձախ, գնում և փոխադիրը, իսկ առ
վելի ձախ—Հին պահակի փոխադիրը։

Հերթափնյությունը մոռնում է պոստին։
Պոստ չի կարելի համարել միայն այն փոք-
րիկ ուղին, վորով քայլում և ժամապահը,
կամ բուղկան, կամ գունակը, վորի մոտ
կանընած և նա։ Պոստ և հանդիսանում ժա-
մապահին հանձնած ամրով անդամուը։ և
այն ամենը, ինչ վրբ գտնվում է այսոեղ։
Կանոնադրության մեջ ասված և (Հոդ-
ված 73)։

«Ժամապահի պահպանության ու պաշտ-
պանության հանձնած ամեն ինչ, այլև այն
տեղը կամ տնօղամասը, վորուել նա կատա-
րում և իր պահպանությունները, հանդի-
սանում և պրառ։

Հերթափնյութ՝ ժամապահից յերեք քայլ
հեռավորություն վրա պահակատեսը հրա-
ման և տալիս։ «Հերթափնյ, կանդ ա՛ռ», և
հրամայում և Հերթական պահակայինին ըն-
դունել պոստի, իսկ ժամապահին—հանձնել։

Ի՞նչպես և կատարվում պոստի հանձնումն

և ընդունելությունը։ Պահակային ծառայու-
թյան կանոնադրության 45-րդ հոդվածում
առված է։

«Պոստի հանձնումը կայանում է նրանում,
վոր ժամապահը ցույց է տալիս իրեն փո-
խանորդողին պոստում։ Եթե ի՞նչ կա հանձնելու
ու (գոները, պատուհանները, կողպեքնե-
րը, կնիքները, պլոմբները, հակահրդեհական
միջոցները, կատի միջոցները և այլն), հա-
զողողում և ավլյալ պոստի պահպանության և
պաշտպանության առանձնահատկություննե-
րը։ բացի գրանից, արտաքին պոստերում
հանձնում և գիտելու սեկտորը, կրակային
կեաները և ցույց է տալիս պահակային շան
տեղը, յեթե նա դրված է»։

Ի՞նչ առանձնահատկություններ կարող են
ունենալ պոստի պահպանությունն ու պաշտ-
պանությունը։ Ժամապահը պետք է խմա-
նա, թե վո՞րտեղից և մինչև ի՞նչ տեղ կարե-
լի յե շարժվել պոստում, ո՞ւմ, ո՞ւր և ի՞նչ
աարածությամբ կարելի յե մոտ թողնել, տե-
ղի վո՞ր մասերն առանձնապես պետք է գի-
տել, վո՞րտեղ և գտնվում խրամատն և այլն։
Ի՞նչ բան և գիտելու սեկտորը։ Դա այն

տթղամասում են, վորը պետք են դիտի ժամանակահայրը, որինակ պուրակի ծայրից մինչև գյուղի ծայրամասը։ Ըստ այսմ ժամապահը պետք են հաղորդի իրեն հաջորդող պահակացինին տարածության քայլերի քանակը կամ նշանառությունը մինչև այս կամ այն իր համար տեսանելի տեղական առարկաները, որինակ, մինչև պուրակի ծայրը, մինչև ճանապարհների խաչմերուկը, մինչև առանձին ծառը, մինչև հարդանոցը, ցանկապատը և այլն։

Ապա, կանոնադրության նույն հոդվածում ասված ե։

«Յեթե պոստը հանձնելու ժամանակ յերեսվան կդա վորեն անկանոնություն (կնիքների, պլոմբների, կողպեքների կամ քուղերի վնասովածք, կնիքների տարրերություն դրոշմի հետ, ջարդվածք և այլն), պոստի հանձնումը գաղաքարեցվում են մինչև պահակապետի դաշնությունը կարդապում անմիջապես փոխադիրը կանչում և պետին պոստը։

Յեթե ամեն ինչ հայտնվում են կարգին և անվնաս, այդ դեպքում նախկին ժամապահը

գեկուցում են հին փոխադիրին «պոստը հանձնեցի», իսկ փոխարինող պահակայինը գեկուցում են իր փոխադիրին. «Պոստն ընդունեցի»։ Իր գեկուցումի վայրկյանից նախկին ժամապահը դադարում են ժամապահ լինելուց և գառնում են պահակային։ Այդ իսկ վայրկյանից զեկուցելով. «Պոստն ընդունեցի», փոխարինող պահակայինը դադարում են պահակային լինելուց։ Նա անցել են պոստը, ընդունել են այդ վայրկյանից դարձել են ժամապահ։

Պոստը հանձնելուց հետո փոխանորդվող պահակայինը հանձնում են նոր ժամապահին պոստային հագուստը, իսկ հետո պահակապետի համարանուվ. «Ժամկետից (պոստից) քայլով մարչ», հեռանում են պոստից և կանզնում են պահակայինների հերթափոխության ծոծը բակին։

ԱՅԴՊԵՍ Ե ՊԱՀԱՆՁՈՒՄ ԺՈՂԿՈՄԸ

Պահակային ծառայության մեր կանոնադրությունը հաստատել են պաշտպանության ժողովրդական կոմիսար Խորհրդային Միության մարշալ ընկեր Վորոշիլովը։ Կատա-

բելով կանօնադրությունը, ժամապահը կատարում և ժողովրդական կոմիսարի պահանջը:

Վորոնցով են ժամապահի պարտականությունները պատուի վեա: Վերլուծենք որինակներով:

Ամենից առաջ՝ ո՞վ և ժամապահը: Կանոնադրությունն առում է՝ (Հոգմած 79):

«Ժամապահը— Բանվորաւ Գյուղացիական կազմից Բանակի զբնած մարտիկն և, վոր մարտական խնդիր և կառուցում իրեն հանձնած պատուի պահպանման և պաշտպանության մեջ»:

Ժամապահը կատարում է մարտական խնդիր: Գտնվելով պատում նույն իսկ խառնադ ժամանակի, ժամապահը զենքը ձեռքին կատարում է զատվածով մարտական պարտականություն մեր սիրելի հայրենիքը պաշտպանելու մեջ, — այն պարտականությունը, վորի համար նու կոչված և Բանակ և վորի որինակելի կատարումը Հանձնել են նրան մեր մեծ յերկրէ բանվորներն ու բոլոր աշխատավորները: Յեվ Հենց այն պատճառով, վոր նա կատարում է այդպիսի պատվավոր և

պատասխանատու գործ, նրան տված են առանձին իրավունքներ: Կանոնադրությունն ասում է (Հոգմած 80):

«Ժամապահը — անձեռնմխելի անձնավորություն և, այդ անձեռնմխելիությունը կայանում է:

ա) ժամապահի հեղինակության և արժանապատվության առանձին պաշտպանության մեջ՝ պրոլետարական պետության հեղափոխական որենքի կողմից:

բ) այն բանում, վոր ժամապահն յենթակայել վորոց անձանց— վուխադիրին, պահակի պետին և նրա ողնականին և պահակի կադամում գտնվելու ժամանակամիջոցում չի յենթարկվում, իր անմիջական պետերին.

գ) նրանում, վոր բոլորը, բացի նրանցից, վորոնց յենթարկվում են նա պահակալույթին ծառայությունը կատարելիս, պարտավոր են առանց Հակածառության կատարելու ժամապահի բոլոր պահանջները.

դ) ժամապահին տրված զենք գործածելու իրավունքի մեջ, ներկա կանոնադրության 83—րդ Հոգմածում նշված դեպքերում:»

Թե վորքան մեծ են ժամապահի իրավունք-

ները, այդ մասին վկայում են կանոնադրության խոսքերը. «Ժամապահն—անձեռնմխելի անձնավորություն ե: Ժամապահին վիրավորելու համար մեղավորները կրում են կրկնակի պատասխանատվություն ըստ մեր խորհըդային որենքների. Վոչ միայն նրան, վորակես ԽՍՀՄ-ի քաջաքացու և կարմիր բանակայինի վիրավորելու համար, այլ և նրան, վորակես մարտական խնդիր կատարոն՝ հայրենիքի պաշտպանին վիրավորելու համար: Ժամապահը յենթարկվում է միայն յերեք հոգությունականին, պահակի ոլետին և նրա ոզնականին,— և կատարում է միմիայն նրանց հրամանները: Ուրիշ վոչ մի հրամանատար, ինչքան բարձր պաշտոն ել վոր ունենա նա, չի կարող ժամապահին հրամաններ տալ: Յեկ, ընդհակառակն, ժամապահը իրավունք ունի հրամայթու ում ուղենա, բացի նրանցից: Վորոնց յենթարկվում ե: Նա կարող է հրամայել նրանց հեռանալ պոստից, կանգ առնել և ամեն մեկը պարտավոր է կատարելու նրա հրամանները: Վերջապես ժամապահը իրավունք է ստանում վորոշ դեպքերում զենաքի դիմելու:

Տալով ժամապահին այդպիսի մեծ իրավունքներ, խորհրդային որենքը գնում է նրա վրա նաև մեծ պարտականություններ: Կանոնադրությունն ասում է (Հոդված 81):

«Ժամապահը յենթարկվում է պահակապետին, նրա ոզնականին և իր փոխադիրին. միմիայն նրանց հրամանումն է ժամապահը անցնում իր պոստին, փոխվում և հեռացվում պոստից:

Այդ անձանց մահվան դեպքում կամ այն ժամանակ, յերբ նրանք Փիղիկական հնարավորությունն չունեն կատարելու իրենց պարտականությունները, ժամապահին կարող են նշանակել, հանել և փոխել.

ա) զորամասերի ներքին պահակում— միմիայն անձամբ զորամասի հրամանատարը կամ զորամասի որապահը.

բ) կայազորային պահակներում— պահակների որապահը»:

Հերոս-ժամապահներ Զերնիշելը, Կարպովը, Նիկիտենկոն, Զալյալովը և ուրիշները վարվել են կատարելապես իրավացի, վոր չեն հեռացել պաստից առանց պետերի կամ որապահների թույլտվության, վորոնք նշանակել

Ե՞ն նրանց : Նրանք հաստատապես գիտեյին ,
վոր պոստն առանց թույլավության թող-
նելու նշանակում է չարդարացնել ժամապա-
հին ցույց տված վատահությունը , չկատա-
րել կանոնադրության պահանջները և մար-
տական խնդիրը :

Պոստից—վոչ մի քայլ , նույնիսկ այն դեպ-
քում , յեթե ժամապահը հանկարծակի հե-
տականում է , իսկ փոխադիրը չի բում նրա
կանչը , կամ յեթե պոստից մոտիկ վորեն
տեղ , որինակ , գետի վրա , լսվում է ողնու-
թյուն խնդրող աղմուկ : Գործ դիր բոլոր մի-
ջոցները , վոր կանչես պահակատեսին ,—
կանչիր , աղդանշաններ տուր , կրակիր ողի
մեջ , բայց ինքը մնացիր անդդ :

Այնուշետև կանոնադրությունն առում է
(Հոդված 82) .

«Փոխվելով պոստը , ժամապահը պետք է
խնամքով ստուգի և համոզվի իր պահպա-
նությանն հանձնած ամեն ինչի կանոնավո-
րության մեջ , այլև աղդանշանման միջոց-
ների և հակահրդեհային սարքավորման կա-
նոնավորության մեջ» :

Ի՞նչ է հարկավոր անել դրա համար : Ցեթե-

պոստը գտնվում է չինության մոտ , ամենից
առաջ պետք է ուշիուշով զննել , վնասված
չե՞ն արդյոք պատուհանները , գոները , պա-
տերը , չկա՞ն արդյոք ականներ այն չինու-
թյան տակ , վորը պահպանում էն : Ընդունե-
լով պոստը դրամարկղի մոտ , զննել , կոտըր-
ված չե՞նա , չկա՞ն արդյոք նշաններ , վո-
րոնք ցույց տան , վոր վորեն մեկը փորձել է
բացել կամ կոտրել այն : Յեթե պոստի մոտ
կան ցանկապատ , պատ կամ լարափակոց ,
պետք է ստուգել , ջարդված չե՞ն տախտակ-
ները , աղյուսները կամ ցանկապատի ձո-
ղերը , ծոված չե՞ն լարերը , վորեն մեկը հո-
չե՞ն մտել նրանց տակը :


Ուշադրությամբ ստուգել , կարգի՞ն և կնի-
քը : Բավական չե միայն համոզվել , վոր կնի-
քը կախված է իր տեղում և արտաքուստ
անվնաս է : Հարկավոր է անպատճառ համե-
մատել կնիքը դրոշմի հետ , վորը գտնվում է
պահակապետի մոտ : Կնիքը դրոշմի հետ
համեմատում է պահակատեսը , բայց ժամա-
պահն ել պետք է անի այդ , վորովհետև նա
ամբողջովին պատասխանառու յե իր պոս-
տի համար :

1923 թվին Սմոլենսկում գտնվում եր զինակորական դպրուղ, վորի պահեստը գտնվում եր բերդի պատի հետեւ, հեռվում։ Պոստը վատանգամբ պատի մոստ եր, նա գտնվում եր համարյա մի կիւռմետր տարածության վրա ամբողջ պահակից։ Շատ ժամապահներ են արդեն կանոնած յեղել այդ պոստում և ամեն ինչ, թվում եր թե, կարդին եր։ Միայն գիշերներն յերեմն վոռնում եր քամին և թիթեղյա կտորի կոտրված կտորով ծեծում եր պոստը։

Բայց ահա մի անգամ յերեկոյան յերբորդ հերթափոխության մեջ նշանակվում ե. պոստի վրա կուրսանտ կոմունիֆու Սաղոնովը։ Գիշերը մութն եր, յերբեմն յերեսում եր լուսինը։ Քայլում և Սաղոնովը պահեստի շուրջը, մի տաս քայլ անում, կանգ և առնում ականջ և դնում, նայում և չորս կողմը։

Սաղոնովը լավ գիտեր իր պարտականությունները։ Պոստն ընդունելուց հետո նա կրկին անգամ ստուգեց դաները, կողմեքները, պատուհանները— ամեն ինչ կարդին եր։ Հետո Սաղոնովն սկսեց յերկրորդ անգամ դնել պատերը։ Նա քայլում եր պահեստի

շուրջը այն ճանապարհով, վոր ժամապահները բացել ելին ձյունի մեջ քայլելով։ Մի տեղ, հենց ուղիղ բերդի պատի դիմաց, Սաղոնովը նկատեց ճանապարհի կողքին, պահեստի պատի մոտ, կոխկրտած ձյուն։ Այն ժամանակ նա ուշադրությամբ դիտեց բերդի ստատը և տեսավ հազիվ նշմարելի հետքեր, վերոնք հարթված ելին վոչ այն և տոպրակով, վոչ այն և գրատի (շինելի) փեշով։ Այդտեղ նկուղի մոտ կային առգրովի ողանցքներ և յերբ Սաղոնովը կացավ, նա տեսավ, վոր այդ ողանցքի մոտ մեկը քաշ և յեկել և բացել և այն։ Թեու չեր վճռել Սաղոնովն իր անելիքը, յերբ պահեստում, ուղիղ ողանցքի մոտ, լսվեց թեթև աղմուկ։ Մեկը ներսից սկսեց բացել ողանցքը։ Մի կողմ հրեց այն, դուրս բերեց գլուխը, նայեց չորս կողմը և սկսեց գուրս սողալ։ Յերբ մարդը համարյա դուրս եր յեկել, Սաղոնովը բարձրաձայն գոչեց. «Կա՛ց» և յերկու անդամ կրակեց ողի մեջ։ Մինչև պահականոցից ընկերների գալը Սաղոնովն ամբողջ ժամանակ պահում եր, այդ մարդուն հրացանի նշանի տակ, թույլ չտալով, վոր խոսի։



Սազոնովը պահում եր նրան հրացանի
կրտք առկ:

Սազոնովին պարզեատընցին, իսկ այն ժա-
մապահները, վորոնք կանդնած եյին նրանից
առաջ և չելին նկատել ականը, յենթարկ-
վեցին տույժի այն բանի համար, վոր անու-
շադրությամբ եյին ընդունել պոստը և չելին
ստուգել՝ կարդին ե արդյոք ամեն ինչ:

Աեհրաժեշտ և նույնպես ինամքով ստուգել
աղդանշանման միջոցները: Մի անգամ վո-
խանորդվելով հրետանային պահեստի մոտ
դանվող պոստում, ժամապահ Սեմյոնովը
չեր ստուգել աղդանշանումը, իսկ հետո,
յերբ նու սկսեց կանչել փոխադիրին, պար-
զեց, վոր աղդանշանը չի գործում: Նա ըս-
տիպված եր կրակել, տադապղ բարձրացնել
պահակում և զարթեցնել հանդստացող հեր-
թափոխներին:

Ամենակարեռ հոդվածը ժամապահի հա-
մար հանդիսանում է պահակային ծառայու-
թյան կանոնադրության 83-րդ հոդվածը:
Այսուղ թված են ժամապահի պարտակա-
նությունները պոստում: Հոդվածն սկսվում
է այսպես.

«Պոստում ժամապահը պարտավոր ե պահ-

ողանել իր պոստը և չթողնել անընդհատ և
անընդհատ թյուղությունը»:

Պարապել պոստում կողմնակի գործով.
կարգալ մակագրությունները պատերի վրա,
քանդակել պատին իր անունը, ձողիկով .իր
ստորագրությունը դնել գետնի կամ ձյունի
վրա, խոսել անցորդների հետ— հանցանք ե:
Զգոնություն և ուշադրություն— ահա ինչ է
պահանջվում յուրաքանչյուր ժամապահից
պոստում:

Այնուհետև, ինչպես նշում ե կանոնադրու-
թյունը, ժամապահը պարտավոր ե «չթողնել
իր պոստը մինչև փոխվելը կամ հանելը»:

Ի՞նչ տարբերություն կա փոխվելու և հա-
նելու մեջ:

Հերթափնխությունն այն ե, յերբ մի ժա-
մապահի փոխարինում ե մի ուրիշ ժամապահ
իր խոկ պահակից, կամ նոր պահակից: Հեր-
թափնխությունը կատարում ե փոխադիրը
և պահականվետի կամ նրա ողնականի ներ-
կայությունն այստեղ չի պահանջվում: Փո-
խադիրի հրամանով ժամապահը հանձնում ե
իր պոստը նոր ժամապահին և հեռանում ե
նրա հետ միասին:

Հանելն այն ե, յերբ ժամապահը վոչ վոքի
չի հանձնում պոստը, այլ պոստը ժամանա-
կալորապես կամ բոլորովին վերացվում ե:
Որինակ, դրամարկղի մոտ ցերեկով, յերբ
գանձապահը նստած ե, սովորաբար ժամա-
պահին հանում են (վերացնում են): Նույն-
պես ժամապահին սովորաբար հանում են
պահեստաների մոտից ցերեկով, քանի այն-
տեղ են գտնվում պահեստի պետը և բան-
վորները: Վերջապես, պոստը կարող ե
վերացվել նաև իսպառ:

Բայտ կանոնադրության (Հոդված 81).

«Ժամապահներ դնելը նոր, առաջուց
չդրված պոստերում, նաև ժամապահների
հեռացումը պոստերից կատարում ե փոխադի-
րը պահակի պետի կամ նրա ողնականի ներ-
կայությամբ»:

Բայտ վորում ժամապահներ դնելու և հե-
ռացնելու մասին պահակի պետը նշում
պահակաթերթիկում: Այդ կանոն սերը իրա-
տությամբ պետք ե պահպանել: Առանց հա-
մապատասխան պետերի թույլտվության ժա-
մապահը չի կարող վոչ հեռանալ պոստից,
վոչ ել թողնել այն առանց հսկողության:

83-ըդ հոգվածում ասված է, թե ժամապահը պարտավոր է.

«Բաց չթողնել զենքը ձեռքից, պահելով այն այնպիսի դրությամբ, վոր ապահովված լինի նրա արագ գործադրումը (վոտի մոտ կամ ուսին գրած): Հրացանը մեջքին էամ «փոկից կախած» արգելվում է պահել, բայց այն գեպքերից, յերբ ժամապահը գործում է հրամարիչի հետ՝ պոստում տեղի ունեցող հրդեհի ժամանակ:

Իսկ միւս պատճենի հաւիր պեսք և բաց լինի, փամփուշտների փաթեթները բացված»:

Այդ ցուցմունքը շատ կարևոր է: Զե՞օ վոր հարձակումը պոստի վրա կարող է կատարվել անսպասելի կերպով: Այս պատճառով ել գանվելով պոստում, հարկավոր է միշտ հրացանը ձեռքին ունենալ լցված, պատրաստ կրակելու համար, իսկ պահեստի փամփուշտները— խուփերը բացված, վորպեսզի կարելի լինի արագորեն կրկին լցնել հրացանը:

Այսուհետեւ կանոնադրությունը նշում է. «Մոտ չթողնել պոստին այնքան, վորքան

նշված է պոստինից ցուցակում, բայցի փոխադիրից, պահակապետից, նրա ողնականից և այն մարդկանցից, վորոնց ուղեկցում են նրանք, պահակայինների հերթական փոխանորդներից և ուղեկալներից, վորոնց ուղարկված են պահակի կազմից: Պոստին մոտեցող մասացած բոլոր մարդկանց կանգնեցնել յերեք անգամ ձայն տալով. «կա'ց» և անմիջապես կանչել պահակի պետին: Ժամապահի շահանջները չկատարելու դեպքում վերջինս սախազգուշացումից հետո գործադրում, և գենեցը» (Հոդված 83):

Այսպես ուրեմն, ժամապահը չի թողնում մոտենալու պոստին վոչ միայն կողմնակի մարդկանց, այլ նույնիսկ հրամանատարներին, վորոնց նա չի յենթարկվում պոստում: Բոլոր մոտեցողներին ժամապահը պարտավոր բոնել և կանչել արդեն վոչ թե փոխադիրին, այլ անմիջապես պահակապետին: Ինչո՞ք ե բացատրվում կանոնադրության այդ պահանջը: Նախ՝ ժամապահը պոստում վոչնչով շպետք ե զբաղեցնի իր ուշադրությունը: Յերկրորդ՝ պետք ե չմոռանալ, վոր թշնամին խորամանկ և աշխատելու յե գործել

ինաբելով։ Կմոտենա, որինակ, ժամապահին
մի վորես պառավ կին, վորպես թե հարց-
նելու ճանապարհի մասին, իսկ նրա խոսե-
լու ժամանակ թշնամին կարող ե անսպասելի
կերպով հարձակվել նրա վրա անկյունից։
Որինակելի ժամապահներ կուլբայելի և Շար-
դամը բեկութիւն գետքում մենք տեսանք, թե
ինչպես շայկայի պարագլուխ աշկարա դա-
լիս եր դեպի պոստը, աշխատելով քողար-
կել այն հանդամանքը, վոր նրա հետեւից
կամացուկ սողում ելին նրա ավազակային
շայկայի մասնակիցները։ Ահա թե ինչու յե
ժամապահը միանդամից կանչում պահակի
պետին, վորպեսզի պարզի, թե ի՞նչ մարդ ե
պոստին մոտեցողը։ Թշնամի Հո չե՞։ Բայ
կանոնադրության պահակի պետն իրավունք
ունի ճերբակալելու բոլոր կասկածելի մարդ-
կանց, խուզարկելու նրանց և ուղարկելու
պահակների որապահի մոտ։

Այս պատճառով ներկայումս ժամապահին
տրված ե մի նոր իրավունք ևս, վոր նա ա-
ռաջ չուներ։ Կրակել, յեթե պոստին մոտե-
ցողը չի կատարի ժամապահի որինական պա-
հանջները։ Բայ այսմ կարեռ և չմոռանալ

մի էմմնական պահանջ։ Ժամապահը պարտա-
վոր ե բոլոր միջոցներով բռնել և կանգնեց-
նել պոստին մոտեցողներին։ Յեթե «կա'ց»
ասելուց հետո անձանոթը կանդ չի առնի,
այլ կդնա հակառակ կողմը, միևնույն ե,
նրան հարկավոր ե բռնել։ Գուցե նա թշնամու-
հետախույզն ե, լրտեսը, վորը ստուգում ե
ժամապահի զգոնությունը։ Համոզվելով,
վոր այդտեղ նրան չեն թողնում, նա փոր-
ձելու յե ներս թափանցել մի այլ տեղից։ Ա-
հա թե ինչու համար ե կարևոր նրան բռնելը
և հանձնելը պահակապետին, վորը կպարզի,
թե ինչ մարդ ե նա և ինչպիսի նպատակնե-
րով և մոտեցել պոստին։

Վոչ ընկերոջը, վոչ ծանոթին, վոչ բարե-
կամին, վոչ ազգականին չի կարելի նշածից
ավելի մոտ թողնել պոստին և վոչ վոքի հետ
ժամապահը չունի իրավունք խոսակցության
բռնվելու։ Դու չդիտես, թե իսկապես ինչ
մարդ ե նա, վորին դու ծանոթ ես համա-
րում և ինչ նպատակներով ե նա դալիս պոս-
տի մոտ։

Ժամապահի Հետեւյալ պարտականությու-
նը.

«ԵՇԵԹՆ ԸՆԿՆԵԼՈւց Հետո և ժառախուղի
ժամանակ կանգնեցնել բոլոր պոստին մոտե-
ցողներին ձայն տալով. «Կա'ց», «ո՞վ ե զա-
լիս»: ՅԵԹԵ կոտացվի պատասխան. «Դաշխո
և պահակապետ (փոխադերը, պահակապետի
ոդիականը, դետքի ավագը) Խվանովը», այդ
դեպքում ժամապահը թույլ ե տալիս մոտե-
նալու իրեն նշված անձնավորություններից
միայն մեկին, իսկ մյուս ուղեկիցներին թույլ
ե տալիս մոտենալու այն ժամանակ, յերբ
անձամբ ճանաչում ե առաջին մոտեցողին»
(Հոդված 83, կ. 5):

Կանոնադրության այլ կետը աղետք ե
ճշորությամբ կատարել: Հոչ մի դեպքում չի
կարելի ձայն տայտոց հետո մոտ թողնել բո-
լորին միանգամից: Սկզբում պետք է թողնել
միայն մեկին: Ըստ այսմ կանոնադրությունը
նշում ե.

«ՅԵԹԵ իրեն պահակի պետը, փոխադերը
և այլն անվանող անձնավորությունները ժա-
մապահին անհայտ կլինի կամ հայտնի կլինի,
բայց իրեն անվանած կլինի սխալ ժամա-
պահը բանում ե նրան և անմիջապես կանչում
ե վորմետ մեկին պահակի կազմից: Ժամապա-

հի պահանջները կալամավորվածի կողմից
չկատարելու կամ փախչելու փորձ անելու
դեպքում ժամապահը գործադրում ե զինք»
(Հոդված 83, կ. 5):

Զգեսք ե մոռանալ, վոր գիշերով, ժա-
մապահպատ որերում և այն չարագործներն
ավելի հաճախ են փորձելու հարձակվել պոս-
տի վրա բացարձակապես կամ խարուսիկ
միջոցներով: Աչա թե ինչու ներկա դեպքում
կանոնադրությունն իրավունք ե առլիւ ժա-
մապահին գործ դնել զենքը, յեթե կալանա-
վորվածը կփորձի փախչել: Ըստ այսմ ա-
ռաջ կանոնադրությունը պահանջում եր ձեր-
բակալիել միայն անձնանոթներին, իսկ այժմ
ժամապահը պարտավոր է բնել նաև ծա-
նոթ, բայց իրենց սխալ անվանած մարդ-
կանց: Շատ կարելի յե, այդ ծանոթ մարդը—
լրսու և խսկալես, վորն յերկար ժամանակ
ծածկվել և դիմակալվորվել ե, զուցել նույնիսկ
խցկվել ե կարմիր բանակայինների շարքերը,
իսկ այժմ դնում և վոճրագործություն կա-
տարելու: Այդ հնարավորության մասին միշտ
պետք ե հիշել և վոչ վոքի վրա հույս չղնե-
լով, հաստատապես, առանց ամենաչնչին

նահանջման, կատարել կանոնադրության
պահանջները:

Կանոնադրության մեջ առված է.

«Վոչ մի խոսակցություն չունենալ կրդմ-
նակի մարդկանց հետ, չպատասխանել նրանց
հարցերին... Պետքի, վորոնք իրավունք ու-
նին ստուգելու պահակները, նրա ողնակա-
նի, փոխադրելոն, դետի, ալազի տված
հարցերին պատասխանում՝ և ժամապահը:
Պոստի հսկողությունն այդ ժամանակ հան-
ձնվում է ուղեկցող պահակայինին, վորին
հատկապես նշտնակում են այդ նպատակնե-
րի համար պահակի կազմից» (Հոդված
83, կ. 6):

Իր պարտականությունները ճշորեն կա-
տարելու համար ժամապահը պետք է լավ ի-
մանա, թե ո՞վքեր կարող են ստուգել պա-
հակները:

Ըստ կանոնադրության պահակները ստու-
գելու իրավունք ունեն նրանք, վորոնց յեն-
թարկվում են պահակները, այսինքն կայս-
որի պահակների որապահը կամ զորամասի
որապահը՝ նրանց ողնականները, կայս-
որի պետը և քաղաքի պարետը կամ զորա-

մասի հրամանատարը: Բացի դրանից, պա-
հակներն ստուգելու իրավունք ունին դուրս-
մանի անմիջական պետքերը, վորուեղից նշա-
նակվում են պահակները, սկսած վաշտի հրա-
մանատարից և ավելի բարձր, այսինքն
վաշտի հրամանատարը և քաղաքեկը, դումոր-
տակի հրամանատարը, զնդի հրամանատար-
ներն ու զինկոմները, զելիկիդիայի, կորպու-
սի հրամանատարները, ոկրուդի քանակի,
նախատորմի) զորքերի հրամանատարը և
նրա տեղականները, նաև հրամկացը և
ԱՄՀՄ-ի Պաշտպանության Ժողովրդական
կոմիսարիատի կենտրոնական վարչություն-
ների և ոկրուգների շտաբների հրամ-պետ-
կազմը և տեսչական մտաշ:

Կարո՞ղ են ժամապահը պատում կանգնած
ժամանակ պատասխանել այլ մարդկանց
հարցերին: Յեթե նրանք դնում են առանց
պահակապետի, կամ նրա ողնականի, կամ
փոխադրի, այդ դեպքում առհասարակ ժա-
մապահը նրանց չի թողնում մոտենալու պոս-
տին և, իհարկե, վոչ մի խոսակցության չի
բունվում նրանց հետ: Իսկ յեթե նրանք գնում
են պահակապետի, կամ նրա ողնականի, կամ

փոխադիրի ուղեկցությամբ, այդ գեղքում
ժամապահն իրավունք ունի պատասխանելու
նրանց հարցերին, վորոնք վերաբերում են իր
պոստին և պարտականություններին։ Ըստ
վորում յեթե ժամապահը ճանաչում է դեմ-
քից ստուգով անձնավորություններին, այն
ժամանակ ուղղակի պատասխանում են նրանց
հարցերին, իսկ յեթե չի ճանաչում, թույլ-
տվություն են նրաբերում փոխադիրից կամ պա-
հակապետից, կամ նրա ոգնականից։

Անհրաժեշտ է հիշել, վոր պետք է պա-
տասխանել միայն այն հարցերին, վորոնք
վերաբերում են պոստի ծառարությանը։
Յեղ նույնիոկ այդ տեսակ հարցերն ել պետք
է սակավաթիվ լինեն։ Իսկ յեթե խոսակցու-
թյունն յերկարում է, ժամապահը պարտա-
վոր է ուշազրություն դարձնել վրա վրա և
նախազդուչացնել։ Բանը նրանումն է, վոր
թեև ստուդողներին ուղեկցում է պահակա-
յինք, վորը հսկում է պոստին այն միջոցին,
յերբ ժամապահը պատասխանում է հարցե-
րին, այսուամենայնիվ ժամապահը չի դա-
դարում պատասխանատու լինելուց պոստի
համար։ Այս պատճառով ել յերկար ժամա-

նակ խոսակցություններով կտրվել պոստին
հսկելուց չի կարելի ժամապահի համար։
Իսկ յեթե ուղեկցող պահակային չկա, այդ
գեղքում ժամապահն առհասարակ չի պա-
տաւախանում հարցերին։

Բացի գրանից, հարկավոր է հիշել, վոր
կանգնած լինելով պոստում, ժամապահը քա-
նի դեռ փոխված կամ հանված չե, վոչ վո-
քին չի տալիս զենքը, նույնիսկ նրանց, վո-
րոնք կանգնեցրել են նրան պոստի վրա և վո-
րոնց յենթարկվում են նա։ Պահակները ստու-
գելու ժամանակ ժամապահը միայն պատաս-
խանում է հարցերին, բայց զենքը ցույց չի
տալիս և ուրիշի ձեռքը չի տալիս։

Ի՞նչպես պետք է վարդի ժամապահը նրա
վրա հարձակվելու կամ հրդեհի գեղքում և
այլն։

Ժամապահի պարտականություններին վե-
րաբերող հոգվածում կանոնադրությունն ա-
սում է, վոր ժամապահը պարտավոր ե.

«Կիրառել զենքն առանց նախազգուշացման
իր կամ հարկան պոստի վրա բացարձակ

Հարձակման բոլոր դեպքերում, ոքառազործելով կրակելու և քողարկվելու համար պոստում յեղած խրամատը, իսկ խրամատի բացակայության դեպքում—տեղանքի ծալքերը և տեղական առարկաները և անմիջապես հայտնել հարձակման մասին պահակատուն։ Զենքը գործե ածվում առանց նախազգուշացման նաև կալանավորների կամ բըսնված կասկածելի անձնավորությունները փախչելու դեպքում։

Պահակային ծառայություններ իսկապես մարտական գործե։ Պոստի վրա, ինչպես և մարտական պարագաներում, հարկավոր է ինչպես հարկն ե, և վոչ թե վարժական յեղանակով վարել կրակ և կատարել քողարկումը։ Էստ այսմ կարեոր և չիշել, վոր յեթե պոստի վրա չեն հարձակվում, այլ միայն անցնում են արգելված տեղով կամ արգելված տարածություն վրա, ապա ժամապահը պարտավոր է նախ կանգնեցնել անցնողին, ձայն տալով։ «կա՛ց», փորձել բոլելու նրան առանց զենքի դիմելու և կանչելու պահակի պետին։ Յեթե անցորդը չի կանչնի, ձայն տալ նրան յերեք անգամ, հե-

տո նախազգուշացնել կրակելով ողի մեջ և միայն դրանից հետո, յեթե անցորդը չի կատարի նրա հրամանները, կամ կփորձի վախչել, ժամապահն իրավունք ունի կրակչութախչողին։ Բայցարձակ հարձակման ժամանակ ժամապահն առանց «կա՛ց» ձայն տալու և գործեն նախազգուշացման միանդամից կրակ և բացում հարձակվողի վրա։

Իհարկե, ժամապահը պարտավոր է պաշտպանել վոչ միայն իր պոստը և իրեն, այլև ընկերոջը, կրակով ոգնելով հարեան պոստին, յեթե հարձակվում են նրա վրա։ Սակայն ոգնել կարելի յե միայն կրակով, առանց հեռանալու իր պոստից և թողնելու այն, այլապես հարձակվողը ոգտվելով նրանից, վոր ժամապահը հեռացել և պահպանվող սեղամասից կմտնի այնտեղ թեից կամ թիկունքից։

Հետ մղելով հարձակումը ժամապահը պետք է իսկույն և յեթ ազդանշան տա պահակատուն, միաժամանակ ոգտագործելով իր ձեռքի տակ յեղած ազդանշանման բոլոր միջոցները—ձայնը, լույսը, պայմանական նը-

շանները, — հույսը չդնելով այն բանի վրա, վոր հրացանի կրակոցները կլովեն:


Լավ կրակելու համար ժամապահը նախօ-
քոք պետք է ուսումնասիրի իր պոստի շուրջը
ընկած տեղանքը և հարեւան յերկու պոտե-
րինը — աջից և ձախից: Նա պետք է լավ զե-
տի վո՞րտեղ և ի՞նչպիսի տեղական առուր-
կաններ կան, վո՞ր առարկանների հետեւ կա-
րող է թագնվել հարձակվողը և քողարկվել,
կա՞ն արդյոք հարմար մատուցներ դեպի
պոտեր: Այդ մատուցներին պետք է հետեւ
առանձին ուշադրությամբ, վորպեսզի թշնա-
մին անսպասելի կերպով չմոտենա, թագն-
վետով բլակիների, թփուտների հետեւ և ա-
ռուներում:

Հարձակման դեպքում միանդամից դիպուկ
կրս կ բացելու համար հարկավոր և առաջուց
նշել, թե վո՞րտեղից և ի՞նչպես ավելի ավ-
ե հարվածել այս կամ այն տեղամասը, կամ
առարկան և ի՞նչպիսի նշանացույցով:

Պաստում գտնվելիս ժամապահը խնամքով
քողարկվում, թագնվում է: Քողարկումը
պաստում խիստ կարևոր է: Դա կայանում է
վոչ միայն նրանում, վոր թագնվեն խրա-

ժատում հենց հարձակման ժամանակ: Այն
ժամանակ ուշ կլինի թագնվելը, վորովհետ
հարձակվողն արդեն կտեսնի ժամապահին:
Քուարկվել հարկավոր և պաստում գտնվե-
լու ամբողջ ժամանակամիջոցում, վորպեսզի
ըստ հնարավորության ժամապահը քիչ նկա-
տելի լինի և չարագործը չկարողանա հար-
ձակվել նրա վրա: Ժամապահը պարտավոր
և կանգնել և շարժվել պաստումն այնպես,
վոր վորքան կարելի յե, քիչ նկատելի լինի:
կողքից: Դրա համար լուսարձակները պաս-
տելում դաստավորում են այնպես, վոր նրանք
լուսալորեն դրսի կողմը, թողնելով ժամա-
պահին ստվերի տակ և վորպեսզի դեպի
պուտը տանող մատուցները դրսից լավ լու-
սավորված լինեն և ժամապահի համար հար-
ձար լինի դիտել նրանց առնվազն 50 մետր
տարածությունից:

Հարձակումը պաստի վրա կարող է կատա-
րել վոչ միայն գետնի վրա գտնվող թշնամին,
այլև ողային թշնամին: Հնարավոր և, վոր
հարձակվողը կարող է գործ գնել նաև թու-
նավորող նյութեր: Հնարավոր և, վոր լրտեսա-
ները և դիմելուսանտները կփորձեն կատարել



Ժամապահ, պարտավոր և կանգնել այսպես, վոր
գործան կարելի չեն, քիչ նկատելի վնի:

Ապայլեցումներ և Հրկիզումներ: Մենք ար-
դեն գիտենք ժամապահ-հերոս Զավյալովի
գեղքից, թե ինչպես թշնամիները այրել են
խոտը նրա մոտ: Կանոնադրության մեջ կան
ճշգրիտ ցուցմունքներ այն մասին, թե ինչ-
պես պետք է գործել այդ բոլոր գեղքերում:

Ողային և ֆիմիական նազնապի դեպքում
ժամապահը պարտավոր և կատարել այն կա-

նոնները, վորոնք առանձին Հրահանգով սահ-
մանված են Հակառղային և Հակաքիմիական
պաշտպանության համար: Հիմնականում ո-
գային տագնապի ժամանակ ժամապահը պոս-
տում պարտավոր է դիտել ոդը, չթուլացնե-
լով իր հսկողությունը իր պոստում: Ուղային
Հակառակորդին գիմագրություն ցույց է տա-
լիս դիմավորակներ պահակի մնացած կազմը,
առաջին հերթին՝ պահակի պիտի նշանով
գնդացրորդ գենիթչիկները: Իհարկե, յուրա-
քանչյուր ժամապահ պարտավոր և անհրա-
ժեշտության դեպքում ինքն ել գնդակոծել
վայրեջք կատարող ինքնաթիու: Հատուկ ու-
շագրությամբ պետք է հետեւ, չե՞ փորձում
արդյոք թշնամին ինքնաթիւներից ողային
դեսանտ իջեցնել պարտցյուտներով: Վայ-
րեջք կատարող ինքնաթիւները հայտնվելիս
Հարկավոր և կանչել փոխադիրը կամ հա-
ղորդել հեռախոսով պահակապետին, յեթե
պոստում կա հեռախոս:

Գիմիական տաղնապի ժամանակ ժամ աղա-
քը պարտավոր և արագորեն հաղնել Հա-
կագաղը և չհանել այն մինչև Հատուկ Հրա-
ժան ըլինի վտանգն անցնելու ժամին, առանց

թուղացնելու պոստի հակողությունն ու պահանջությունը։ Հակագազն արագ հազնելու համար հարկավոր և ունենալ այն «պատրաստի», այսինքն այնպիսի գրությամբ, յերբ հակադագի պայուսակը փակված է, նրա համարիչը անց և կպցըրած փոկին և քուղը կապած և գոտու շուրջը, վոր հակագազը շշարժվի կողքի վրա։ Ժամապահը հակադագը վերցնում և առաջուց «պատրաստի», պոստն ամենելիս, վորպեսզի հարձակման դեպքում ժամանակ չկորցնի։

Ժամապահը պարտավոր է.

«Իմանալ կրակ հանդցնող միջնաների կիրառում, (հրամարիչներ, ավագով լի տոպարակներ, հողով ծածկել կրակի ոջախը և այլն)։

Կանոնադրությունն ասում է (Հոդված 85)։

«Հրդեհի և այլ տարերային աղետների դեպքում պոստում կամ նրա մոտ ժամապահն անմիջապես հաղորդում է այդ մասին պահակառուն համաշատասխան աղդանաշնորհ։ Ճեռք առնելով միջոցներ հրդեհը համար և այլն (միայն պոստում)։»

Այդ նշանակում է, վոր յեթե հրդեհն ա-

ռաջացել է պոստի կողքին, ապա ժամապահը միայն հաղորդում այդ մասին պահակառուն, բայց ինքը չի ըգնում հրդեհի հանդցներուն և շարունակում է ուշադրությումը հսկել, վոր կրակը չանցնի իր պոստին։ Բայց յեթե հրդեհը ծագում է հենց պոստում, աղամապահը վոչ միայն ողնություն է ինդրում պահականոցից, այլև ամեն միջոց ձեռք և տոնում հրդեհը հանդցնելու և իր պոստը կրակից պաշտպանելու համար։

Հետմարիչնց ոգտվելու յեղանակը մանրամասն ցուցից և տրված ամեն մի հրամարիչի վրա։ Ամենից հաճախ դրա համար հարկավոր է (նայած հրամարիչի սիստեմին) զարկել անոթի գլուխը մի կարծր առարկայի և ուղղել բացված հրամարիչ հեղուկի հոսանքը կամ փրկուրն այն տեղը, վորտեղ սկսվել է կրակը։

Բացի հրամարիչներից, հրդեհի վեմ ոլորտիկու համար ողակում են ավագով և ավաղով լի տոպարակներով։ Իրա համար կրակի բունը լցնում են ընդհուպ ավագալից տոպարակներով կամ ծածկելու են հողով, ըստ վորում կրակի բունը լցնում են ավաղով լի

տոարակներով և ծամելում են հողով ամենից
առաջ քամու հակառակ վոր արգելվի ողի
մուտքը և կրակը չտարածվի ավելի հեռան:

Ժամապահը վոճ մի անկարություն
չունի և թույլ տալ պոստի մոտ: Արի ակ
ժամապահը կանոնած և պոստում հրեանա-
ցին պարելի մոտ, ճամբարում: Պոստի գու-
շահով չի թույլառիվում կողմնակի մարդ-
կանց մոտ թույնել 50 քայլից ավելի: Յերեկո-
յան մի խուճք հարրած պատահիներ, վորոնք
դրազն են գնում, ձանապարհին կոփի են
սարքում պոստի մոտ: Ժամապահն առաջար-
կուժ և նրանց վերջ տալ կոսին, բայց պա-
տահիները շարունակում են կոփի, իսկ
նրանցից մեկն սկսում է հայհոյել ժամապա-
հին:

Ի՞նչ պետք ե անի այդ դեպքում ժամապա-
հը: Կանոնադրությունն ասում է (Հոդ-
ված, 84):

«Պոստի մոտ տեղի ունեցող ամեն տեսակ
անկարությունները ժամապահը՝ պահ ան-
ջուժ և դադարեցնել և միաժամանակ կան-
չուժ և պահակապետին»:

Ներկա դեպքում պահակապետը շտացե-

րով ժամապահի մոտ, պարտավոր և կայա-
նակիրել խուլիդաններին և տանել պահակա-
տունը, վորտեղից ուղարկել նրանց միջիցիա
քննություն կատարելու և դատի հանձնելու
համար: Կանոնադրությունն ասում է, զոր
«ժամապահը՝ անձեռնմխելի անձնավորու-
թյուն ե»: Կարմիր բանակային ժամա-
պահին, վորը կարգված և պատղավոր և պա-
տասխանատու պոստի վրա վիրավորելու հա-
մար մեղավորները խստորեն պատասխանատու
յեն դատարանի առաջ:

Եթէ ի՞նչ կարող ե պատահել պահակում:
«Լսելով տոշեում կանոնած կամ հարեան
պահակային շան հաջոցը, ժամապահը իս-
կուժ հաղորդում և այդ մասին պահակատուն
սահմանված աղդանշանով» (Հոդ. 87):

Ինչու յե կանոնադրությունն այդպիսի
պահանջ գնում: Բանը նրանումն է, վոր
պահակային ծառայող չներն այնպիս են սովո-
րեցրած ու վարժեցրած, վոր նրանք հաջում
են միայն այն ժամանակ՝ յերբ նկատում են
կամ բռնում են թշնամուն: Դրա համար ել
կանոնադրությունը պահանջում է անմիջա-
պես հաղորդել պահականոց ծառայող շան

Հաջելու մասին։ Շան հաջոցը—Հարձակման
աղբանշան ե։

Հանկարծական հիվանդանալու դեպքում,
ինչպես ասված ե, ժամառահացը արտառն և
կանչում պահակասկետին կամ փոխադիրին։
Հստ այսմ պետք ե կանչել իսկույն և յնթ,
հենց վոր զգում ես տկարություն։ Կարող ե
պատահել, վոր դու հանկարծ կհիվանդանաս
լուրջ հիվանդությամբ և մի յերկու րոպե-
ցից հետո վայր կընկնես, կուշաթափիլես և
արդեն այլևս չես կարող վոչ վորի կանչել։
Պուտը կմնա առանց պահպանության։ Կա-
րող ե պատահել նաև, վոր չարադրծները,
լրտեսները և դիվերսանտները կուղղեն քո
կողմը թունավորող նյութեր առանց գույնի
և հրտի, վորմեսզի ողտվելով քո թունայո-
րումից և անողնական լինելուց, հարձակվեն
պուտի վրա և սպանեն քեզ։ Ահա թե ինու-
հարկավոր ե կանչել իսկույն և յեթ պահ-
կափետին կամ փոխադիրին, հենց վոր
կդժու տկարություն։

Պոստում գենվելիս ժամառահացը չսկիտք և
չեղի իր անմիջական պաշտականություննե-
րը կատարելուց։

ԲԳԿԲ-ի պահակային ծառայության կանո-
նադրության 88-րդ հոդվածում ասված ե։

«Ժամապահին արգելված ե պոստում։ Եը-
խել, ուտել, խմել, յերգել, ընդունել վորեա
առուրկաներ թեկուզ ժամանակավորապես
պահելու համար այն մարդկանցից, վորոնք
իրավունք չունեն նրան համաններ տալու,
ընական պահանջներ կատարել պոստում և
առհասարակ մի վորեան բանով չեղլեւ։ Պահ-
պահ վող պոստի անընդհատ դիտողությունից
և հսկողությունից»։

Բոլոր այն դեպքերում, յերբ հարկավոր
կլինի, ժամապահը պարտավոր ե կանչել փո-
խադիրին, բայց չշեղվել պոստը պահպա-
նելուց և նրան հսկելուց։

Ժամապահին հանձնած պոստի պահպա-
նության և հայրենիքի պաշտպանության
պատասխանատու գործը պահանջում ե բարձր
դգոնություն և յերկաթյա հեղափոխական
կարգապահություն։ Առանց բարձր կոր-
դապահության չի կարելի զգոնությամբ տա-
պահ կարգապահության որինակ ե։

Ցուրաքանչյուր ժամապահ պարտավոր և

մրցակցել իր ընկերների հետ՝ հարվածայնութեն կատարելու ժամապահի պատվավոր և շխատանքը։ Մըցության մեջ մտնելու որինակները պետք է ցույց տան կոմունիստները և կոմյերիտականները։ Մեր պարտքն եւ կատարել պահակային ծառայությունը «գերազանց», լինել պահակի գերազանցիկներ։

ԳՈՐԾԵԼ ԱՐԱԳ—ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ

Կանոնադրությունը տալիս եւ գլխավոր, հիմնական ցուցմունքները։ Գործնական ու շխատանքում, ծառայության մեջ կարող են պատահել այնպիսի դեպքեր, վորոնց վոչ մի կանոնադրությամբ չի կարելի նախատեսել։ Այդ դեպքերում ինքը պետք է վճռես անհնարիք, զեկավարվելով կանոնադրության ընդհանուր, հիմնական ցուցմունքներով։ Բայ վորում պատերազմում կամ պոստի վրա պետք է վճռել շատ արագ, վորովհետեւ թըշնամին չի սպասելու, մինչեւ վոր դու վճիռ կկայացնես։

Ահա թե ինչու յուրաքանչյուր ժամապահ պետք է ունենա ձեռներեցություն, հնարա-

գիտություն, խելամառություն։ յերբ նա չենաց կանգնած եւ պոստում, վոչ վոք նրան չի թելագրի, չի պատասխանի, թե ինչպես ավելի լավ կլինի վարվել ներկա կոնկրետ դեգրում։

Զեռներեցության լավ ու ինակ պահակում կարող եւ ծառայել ժամապահը ընկեր Խովրինի վարքը։

Գիշերը Խովրինը փոխարինեց ժամապահին պահաւատի մոտ։ Նա ըրջեց ամբողջ վայրը, ակա նշ դրեց, գննեց, աւան ինչ համգուստ եր։ Հետո նա կրկին քայլեց պոստի շուրջ և կանգ առաջ արահետի վոլորդան մոտ։ Այս ինչ է։ Խովրինը պարզ տեսնում եր դաշտով անցնող մարդու սիլուետը։ Մարդը կարծես թե լողում եղ գետնի յերեսին։ Գիշերվա մասսի ուղի նոսր ծուխը ծածկում եր անցն ողի վասները և միայն մարմնի բնորոշ յերերումն եր վկայում, վոր մարդը շարժվում է։

Խովրինը ուշադրությունը լարեց, զգա ով ձեռքի ափում վականակի պողպատի ցըրտությունը։ Կանգնեց մի-յերեկու ըսպեց ամեն ինչ կորած է։ Նայեց չորս կողմը— ոչ վոք չկա։



«Զեմ ցույց տալու, վոր տեսնում եմ,
այդպես ավելի լավ ե», — վճռեց ինքն իրեն
Խուրինը:

Յեվ նորից դանդաղորեն քայլեց արահետ-
տով պահեստի շուրջը: Բայց վերադառնա-
լով քարե շենքի անկյունի յետեւը, նա նորից
նկատեց ստվերը և այս անդամ պարզապես
տեսավ մարդու կերպարանքը:

Խովրինը հաշվեց տարածությունը: «Ցել-
կու հարյուր հիսուն քայլ»:

«Ինչ անեմ», — արագ կշռադատեց նա:

Սկզբում մտքովն անդավ կրակել: Բայց
առողջ դատողությունը թելադրեց այլ վո-
րոշեւմ: Ո՞վ է այդ մարդը: Ինչո՞ւ յե գա-
լիս նա: Տեսնում ե նա արդյոք ժամապահին:
Գիտե՞, վոր այստեղ պոստե՞:

Ավելի լավ ե, ձայն առալ...

— Կա՞ց: Ո՞վ ե գալիս...

Մարդը թադնովեց, կարծես խօսասուրկեց
մարտիսովի մեջ:

«Եւ, հետո՞ւ, — դատեց Խովրինը: — Մինչեւ
անձանոթի գտնված տեղը մնում ե հարյուր
քսան քայլ: Մոտենա՞լ նըան: Իսկ պո՞ստը:

Յեւ ինչո՞ւ յիմ յիս կանգնել ամբողջ Հասա-
կովք»:

Խովրինն արագ վազեց առաջ մի տաս
մետր և բռնեց մի փոքր խրամատ: Յածից
ժաւախուղն ավելի բավ եր տեսնվում և
Խովրինը տեսավ գետին թեքիած մարդու
աղուս սիլուետը:

— Կա՛ց: Կանգնիր ամբողջ Հասակովդ:

Մարդը չեր պատասխանում:

— Վերկաց, թե չե էկրակեմ, — յեվ Խով-
րինը բարձր զընդացրեց փականակը:

Մարդն ակամա կանգնեց և դանդաղորեն
գնաց գեպի պոստ, անշուշտ, չտեսնելով
ժամ սպահին:

— Կա՛ց:

Ժամապահը սողաց փայտե սունկի մոտ
և սեղմեց կոճակը: Ի պատասխան մի սպահ
զրնդաց զանգակը պահեստի դռան վերևը:

Կարձ զանդահարություն: Պահակապետը
լսելով կոչը, ուղարկեց ժամապահի մոտ մի
փոխադիր:

— Ի՞նչ ե պատահել:

Խովրինը ցույց տվեց մի կողմ, մառախու-
ղի մեջ կանգնած մարդուն:

— Մարդը գալիս ե դեպի պոստ, ընկեր
փոխադիր:

Յերկու բոպեյից հետո փոխադիրը
տանում եր անձանոթին, պարզելու համար
նրա ովլինելը:

Խովրինն առաջին անգամն եր պոստումը:
Յերիտասարդ կարմիր բանակային փոխա-
նակվողը միանդամից հենց ցույց տվեց, վոր
ուիսէ պահակային ծառայության կանո-
նադությունը: Նա ինքն այսպես եր բա-
ցաւրում էր պոստում ցույց տված գործո-
ղությունների մեջ վստահ լինելը.

— Ինձ սովորեցրել ե պահակային ծառա-
յությունը ջոկի հրամանատար ընկեր Դինցը:
Մենք սովորել ենք կանոնադրությունը վոչ
թե տողերով և պարագրաֆներով, այլ խըն-
դիրներ լուծելու յեղանակով: Դինցը տանում
եր յեզ պոստի տեղը, ցույց եր տալիս պաշտ-
ուանության բնագծերը, մատուցները, խո-
սում եր վտանգների բնույթի մասին, վո-
րոնք սպառնում են պոստին, բացատրում եր
մեզ մեր խնդիրները, ցույց եր տալիս ժա-
մապահի գործողությունները և այլն: Ապա
մենք անցնում ե յինք խնդիրների գործնական

լուծմանը, յերբեմն առանց իմանալու կանոնադրության բնագիրը (տեքստը): Մենք ինքներս եյինք վճռում, թե ինչպես ավելի հարմար է ժամապահի համար վարվել այս կամ այն խնդրում, իսկ հետո Գինցը տալիս եր գնահատական մեր վճիռներին: Վորպես յեզրակացություն, նա կարդում եր կանոնադրության հոդվածները: Այդ դեպքերում տեքստը հեշտությամբ եր մնում մեր հիշողության մեջ:

Իւկապես, խնդիրների գործնական վճիռը ունի խիստ կարևոր նշանակություն պահակային ծառայությունն ուսումնասիրելու մեջ: Այդ տեսակ խնդիրներ վճռելը կարելի յէ կազմակերպել ամեն մի գորամասում, ամեն մի չոկում: Այդ աշխատանքը կարելի յէ կատարել Լենինյան անկյունում: Հարկավոր ե սկսել ամենահասարակ խնդիրներից, վորոնց հեշտությամբ կարող ե կազմել յուրաքանչյուր ակտիվիտետ-մարտիկ, մանավանդ ավելի ավագ ծառայող կարմիր բանակայիններէց: Որինակ, կարելի յէ վճռել այսպիսի հարցեր:

— Ի՞նչ պետք ե անի ժամապահը, յեթէ

պատում վորխարինելիս ու ստուգել ն աղադանումը և գտել ե կա՛լնավոր, իսկ մի քիչ անցած, անցնելով պոստի վայրով, նա պարզում ե, վոր աղղանշանման հաղորդաւորը կտրվել ե:

— Պոստին տարրեր կողմերից մոտենում են յերկու անհայտ մարդիկ: Նրանք գտընվում են հարյուր քայլ հեռափորության վրա ժամապահից և իրարից: Ժամապահի կոչին «կա՛ց», մեկը կանգ ե առնում, իսկ մյուսը հետ ե դառնում և փախչում: Ի՞նչ պետք ե անի ժամապահն այդ գեղլքում:

Կողեկտիվ կերպով քննելով այդ տեսակ խնդիրներ, յուրաքանչյուր մարտիկ վճռում ե խնդիրները անկախողեն, մտցնելով իր առաջարկությունները, թե ինչպես պետք է վարվել: Լսելով բոլոր առաջարկությունները, հրամանատարը, կամ քաղղեկը, կամ հինգամարտիկը տալիս են յեղբակակիչ վճիռ: Համարտիկը տալիս են յեղբակակիչ վճիռ: Համարտիկը կտրվելու դեպքում կանչել փողորդաւարը կտրվելու դեպքում, իսպակելով, իսկ այն գեղլքում, յերբ մոտեցողներից մեկը կանգ ե առել, իսկ մյուսը փախել ե, ուետք ե ձայն տալ փախչողին. «կա՛ց», թե չէ կկրակեմ»: Յեթե

նա կանգ չի առնի, առաջ կը ակել ուրի մեջ,
իսկ յեթե այդ ել չի ողնի, հրացանի բռնել
նրան։ Միենույն ժամանակ հետեւ յերկրորդ
մուեցողին և միաժամանակ կանչել փոխա-
դիրին։

Ժամանակակից պահակը և նրա ծառա-
յությունը՝ բարդ գործ է։ Բացի ժամապահ
ունեցող պոստերից, կան պոստեր, վորոնց
պահպանում են չները, կան գնդացիրներ,
ականներ, ճեղքեր, վորոնց մեջ թագնվում և
պահակը, կը ակելով ողային թշնամուն։

Պահակային ծառայության նոր կանոնա-
դրության համաձայն պահակը կարող է
դուրս հանել առանձին պոստ իր պահպանու-
թյան համար գիշեր ժամանակ, կամ, յեթե
պահակատունը դտնվում է պոստերից հեռու։

«Ժամապահը պահակատան մուտքի մոտ
պարտավոր ե բռնել բոլորին, վորոնք մոտե-
նում են պահակատան, բացի պահակի անձ-
նական կազմից, կանչելով պահակապետին»
(Հոդվ. 92, կանոնադրություն պահակային
ծառայության՝ 38)։

Կանոնադրության դուցմունքի համաձայն
պահակի դիման համար ստացվում էն հա-
կաբիթիտային հազուստ, զենիթային գնդա-
ցիրներ։ Պահակը և նրա պաշտպանության
տակ գտնվող ուայոնը՝ զա մի ամբողջ բերդ
և փոքրիկ կայազորով, վորը գործում է հար-
ձակման գեպքում ճիշտ այսպես, ինչպես
դաշտային պահակը։ Պահայն ի հակադրու-
թյուն դաշտային պահակի, վորը թշնամու-
ճնչման տակ կարող է տեղաշարժվել և արա-
գությամբ ստանալ իր մասի ոգնությունը,
կայազորային պահակը ամենից համար
կարգած և ուրիշ մասերից, կանգնած է հե-
տու վորեւ տեղ, որանք մտսը շուտով չե-
լասնի նրան։ Իր ուայոնը պաշտպանելը կա-
յազրային պահակի համար ավելի ոժվարին
է, վորովհետեւ նա չի կարող թողնել այդ ուա-
յոնը և անցնել մի այլ, պաշտպանության
յոնը և պահակը պահակապետին համար պահ-
պանության համար։ Մանավանդ վե-
համար ավելի հարմար տեղ։ Մանավանդ վե-
րաբերում է այդ ժամապահին, վորը չի հա-
մարձակվում թողնել պոստի տեղամասը, թե-
կուզ նա լինի վոչ բոլորովին հարմար պաշտ-
պանության համար։

Դրա համար և պահակի պաշտպանու-

թյան մեջ պահանջվում են առանձին պլանայ-
նություն և կազմակերպվածություն։ Հստ
կանոնադրության, պահակի պաշտպանու-
թյան պլանը կազմվում են նախորոք և պահա-
կառետը ողարտավոր և իմանալ այդ պլանը։
Պլանի հիմնական ցուցմունքներին ծանոթ
պիտի լինի յուրաքանչյուր պահակային,
վորպեսի իմանա վոչ միայն իր պոստի
պաշտպանության կանոնները, վորտեղ նա
ժամապահ և կանգնած, այլև ամբողջ ջոկինը,
պահակինը ամբողջությամբ։



Մենք քննեցինք ժամապահի գործողու-
թյունները տարբեր դեպքերում պոստի վրա
և պահակում։ Մենք իմացանք այն մասին,
թե ինչքան պատասխանատու և պատվավոր
և ժամապահի աշխատանքը և ինչպիսի հակա-
յական նշանակություն ունի պահակային
ծառայությունը Կարմիր Բանակի համար։
Մենք իմացանք հայրենիքի խիզախ պաշտ-
պանների, հերոս-ժամապահների մասին,
վորոնք անվեհեք ու անձնվեք, չինայելու¹
իրենց կյանքը, պահպանում են իրենց վրա-

տահացած պոստերը և որինակելի ժամա-
պահների մասին, վորոնք որինակելի կեր-
պով կատարում են ԲԻՎԲ-ի պահակային ծա-
ռայության բոլոր պահանջները։ Այդ լա-
վագույնները—որինակ են մեզ համար, որի-
նակ այն բանի, թե ի՞նչպիս պետք են վինի
յուրաքանչյուր կարմիր բանակային ժամա-
պահը։

Յերկրագնդի մի վեցերորդ ժամն և ընդ-
դըրկում մեր մեծ հայրենիքը։ Համարյա-
60,000 կիլոմետր ձգված են նրա սահմաննե-
րը։ Այդ հսկայական տերիտորիան, վորի
վրա ծաղկում ե 170 միլիոնանոց աշխա-
տավոր ժողովրդի սոցիալիստական կյանքը,
պաշտպանում ե Կարմիր Բանակը, վորպես մի
վիթսարի ու հուսալի պահակի։ Մեր սոցիա-
լիստական հայրենիքը ըրջապատված ե կա-
պիտակիստական պետություններով։ Այդ
պետություններում մի բոպե անգամ կանգ-
չեն առնում պատրաստություններ նոր հա-
մաշխարհային պատերազմ սկսելու համար։
Բայց ֆաշիստական դիշատիչների հայացք-
ներն ամենից առաջ ուղղված են մեր հայ-
ութենիքի վրա։ Անընդհատ պրովոկացիաներով

0 24

Նրանք աշխատում են պատկրազմի քաշել
մեղ: Լրտեսությամբ, գիվերսիաներով, վը-
նասարարությամբ նրանք փորձում են վի-
ժեցնել մեր պաշտպանության ույժը: Մենք
չենք ուզում ուրիշների հողը: Բոլոր մեր
մտքերն ուղղված են սոցիալիստական տնտե-
սության շինարարության, բանվորների և
գյուղացիների կյանքի բարելավման վրա:

Մենք պայքարում ենք խաղաղության հա-
մար և դրա համար ել պատրաստ պետք ե
լինենք ամեն բոպե ջախջախիչ հարված տա-
լու թշնամիներին և ջախջախելու նրան իր
տերիտորիայի վրա:

Ուրեմն յեղե՛ք աչալուրջ և զգոն, մար-
տիկի-ժամապահներ, ձեր պատվավոր պոս-
տերում: Յեղե՞ք տոկուն, հաստատուն և հա-
մարձակ պաշտպաններ մեր մեջ և սիրելի
հայրենիքի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Գաղտնի պատերազմ»	3
Զգոնություն ամենից առաջ	23
Հերոսներն իրենց պոստերում	33
Մենք փոխանորդում ենք պահակը	58
Այդպես ե պահանջում ժողկոմը	75
Գործել արսեղ և կազմակերպված	110

Թարդմանիչ՝ Ե. Տ.-Մանվելյան
Պատ. խմբագիր՝ Ս. Մարտիրոսյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռիանյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան

Գլավլիտի լիազոր 0.—3061. Պատմեր 102.
Հրատ. 4465. Տիրաժ 5000.
Թուղթ 62×94. Տպ. 4 մամ. Մեկ
մամ. 35328 նիշ. Հեղ. 2,7 մամ.
Տրված ե արտադրության 28 հուն. 1938 թ.
Տրված ե տպագրության 9 փետր. 1938 թ.

Գի՞նը 75 Կ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0211114

ЧИР 75 ч.

77

Ч2.191

ПАМЯТКА
ЧАСОВОМУ

Год Арм. ССР. Ереван. 1938